«դեմոկրատիայից»: Բուրժուական «ազատութիւն-
ները» ազատութիւն են կապիտալիստների մի աննշան
խմբի համար, ճնշելու աղգարնակութեան հսկայական
մեծամասնութեանը—աշխատավորութեանը:

«Կապիտալիստները միշտ ազատութիւն եյին
անվանում շահելու ազատութիւնը հարուստների
համար, քաղցից մեռնելու ազատութիւնը բան-
վորների համար»,—ասում եր ընկ. Լենինը:

Խորհրդային պետութեան մեջ մի բուռն շահագոր-
ծողների համար չկա և չի լինի վոչ մի ազատութիւն:
Դրա փոխարեն իսկական ազատութիւնն ապահոված
է աղգարնակութեան հսկա մեծամասնութեան համար,
բանվորների և դոյաղացիների բաղմամբ լիոն մասա-
ների համար:

Կապիտալիստներից խլված տպարաններում, ուե-
տութեանը պատկանող թղթի վրա աշխատավորների
համար տպադրվում են թերթեր ու գրքեր, վորոնք
նպաստում են նրանց կուլտուրական աճմանը, համա-
խմբում նրանց սոցիալարարութեան խնդիրները շուր-
ջը: Լավագույն տնէրն ու կալվածատերերի պալատները
տրված են բանվորական և դոյաղացիական ակումբնե-
րին, ժողովների համար, խորհուրդների համադու-
մարների համար և այլն:

Բուրժուական գերիշխանութեան ժամանակ դի-
տութիւնն ու դիտելիքները մատչելի եյին միայն հա-

բուսանքներին, իսկ պրոլետարական ղեկավարութեան մի-
լիոնավոր աշխատավորների հնարավորութիւնն և
տալիս սովորելու՝ դպրոցներում, բանֆակներում,
բուհերում, այսինքն ձեռք բերել անհրաժեշտ ղեկա-
ւորներ պետութիւնը կառավարելու համար, արդյու-
նաբերութիւնը, դյուղատնտեսութիւնը ղեկավարե-
լու համար:

Խորհուրդների ընտրութիւնների ժամանակ աշ-
խատավորների համար խոսք ել կա այն սահմանափա-
կումների և բյուրոկրատական ձեւականութիւնների
մասին, ինչպիսին սահմանված են բուրժուական պար-
լամենտների ընտրութիւնների ժամանակ: Ընտրու-
թիւնների հենց կարգն այնպես է սահմանված, վոր
ապահովում է աշխատավորների ամենամեծ մասնակ-
ցութիւնը նրանում. ընտրութիւնները կատարվում
են անմիջականորեն գործարանում, կարմիր բանակա-
յին զորամասում, կոլտնտեսութեան մեջ և այլն:

Բուրժուական պարլամենտներն ընտրվում են բա-
ցառապես խոսարանի համար, վորոնք ուղղված են
խարելու աշխատավոր մասսաներին, նրանք միայն
որենսդիր մարմիններ են, այսինքն, որենքներ ընդու-
նող (իհարկէ բուրժուազիային հաճելի որենքներ),
իսկ փաստորեն յերկիրը կառավարում են, դատ ու դա-
տաստան անում դեպարտամենտները, գիլանատները,
չինովնիկները:

«Կատիտալիստական յերկրներում, —ասում է
ընկ. Լենինը, — իսկական պետական աշխատանքն
անում են կուլիսների յետևը — և կատարում են
դեպարտամենտները, գիլանատները և շտաբնե-
րը: Դեպարտամենտներում միայն շատախոսում

են «ռամիկ ժողովրդին» խարելու հատուկ նպա-
տակով:

Իսկ խորհուրդները դյուրութիւն ունին վոչ միայն
որենքները քննարկելու և ընդունելու համար, այլ և
աշխատավորութեան ամենալայն մասսաների անմիջա-
կան մասնակցութեամբ, այդպիսիք անմիջականորեն
կյանքում կիրառելու համար:

Խորհուրդների սեկցիաների միջոցով, նրանց բա-
ժինների միջոցով, գործարանների և կարմիր բանա-
կային զորամասերի պատգամաւորական խմբերի մի-
ջոցով, բոլոր խորհրդային հիմնարկների աշխատանք-
ներն ստուգող բանվորա-դյուղացիական տեսչութեան
մարմինների միջոցով խորհուրդների պատգամավոր-
ները և ընտրողների լայն մասսաներն անմիջականորեն
մասնակցում են պետութեան կառավարմանը:

Ահա գործարանում աշխատանքը վերջացելուց
հետո բանվորների խումբը մեկնում է հիմնարկութիւն
(խորհրդի բաժին, ժողովրդական կոմիտարիատ և
այլն) և աշխատում այնտեղ: Սրանք «սոցհամատեղող-
ներ» են, բանվորներ, վորոնք արտադրութեան մեջ
աշխատելը համատեղում են խորհրդային ապարատի
ղեկավարման հետ: Ահա բանվորների մի ուրիշ խումբ
Բանվորա-դյուղացիական տեսչութեան (վերահսկո-
ղութեան) անունից հետադոտում է հիմնաքիլի աշխա-
տանքը: Գործարանները վերցնում են պետական ապա-
րատի շէֆութիւնը, ստուգում նրա աշխատանքը,
դիմում նրան: Նրանք առանձնացնում են հաղարավոր
բրիգադներ ապարատն ստուգելու և անհարադատ տար-
բերից մաքրելու համար:

Ուրիշ վո՞ր պետութեան մեջ, բացի խորհրդայինից, կարելի չե աշխարհի փաստեր տեսնել:

Վերահսկելով և հետեւելով պետապարտի աշխատանքին, արտադրական խորհրդակցութիւններում քննելով արտադրութեան հարցերը, բանվորները և բոլոր աշխատավորները պատրաստվում են ղեկավարելու ապրատը, ամբողջ տնտեսական կյանքը, անընդհատ տասնյակ հազարներով առաջ են քաշվում ղեկավար աշխատանքները:

Խորհուրդների բոլոր բաժինները կանոնավոր կերպով հաշիվ են տալիս իրենց աշխատանքների մասին խորհուրդների նիստերում և ընտրողների ժողովներում: Խորհրդի ամեն մի պատգամավոր կարող է ամեն ժամանակ իրեն ընտրողների կողմից յետ կանչվել խորհրդից և վերընտրվել:

Պրոլետարական ղեկատուութեան զորեղ կարծիքն է ինքնաքննադատութիւնը: Բանվորները և բոլոր աշխատավորները լայն կերպով գործի յեն քաշվում քննադատելու խորհրդային ապրատը, իրենց մասնակցական կադմակերպութիւնների աշխատանքների մեջ յեղած թերութիւնները: Ինքնաքննադատութիւնը պետք է բանա այդ թերութիւնները, անողորմ կերպով յերևան հանի կուսակցութեան և խորհրդային իշխանութեան գծի աղավաղումները, խփի բյուրոկրատին, օպորտունիստին—դասակարգային թշնամու գործակալներին:

Լինում է և այնպէս, վոր ինքնաքննադատութեան նշանարանը դասակարգային թշնամին և նրա գործակալները—բոլոր գույնի օպորտունիստները, փորձում են ոգտադործել խորհուրդների դեմ պայքարի համար:

Այդպիսի «ինքնաքննադատութեանը» յուրաքանչյուր աշխատավոր պետք է անողորմ հակահարված տա: Այդպիսի «ինքնաքննադատութեան» նպատակն է վոչ թե վերացնել իսկական թերութիւններն, այլ փնտել բանվորական ղեկատուութեան, խախտել խորհրդային իշխանութիւնը:

Իսկ պրոլետարական ինքնաքննադատութեան նպատակն է բանալ թերութիւնները, վերացնել այդպիսիք, ամրացնել խորհրդային իշխանութիւնը, ամրացնել պրոլետարական ղեկատուութեան: Պրոլետարական ինքնաքննադատութեան դարգացումը խորհրդային իշխանութեան և կոմունիստական կուսակցութեան հաստատուն խնդիրն է:

Մտածեք, ընկերներ, նմա՞ն է արդե՞ր մեր պրոլետարական ղեկատուութեան մի բուռն շահագործողների այն անբաժանելի բռնութիւնների և աշխատավորութեան լիակատար իրավադրկութեան այն տարիներին, վոր մենք տեսնում ենք պատահած բուրժուական շահանաղեմոկրատացած պետութեան մեջ: Պրոլետարական ղեկատուութեան նմա՞ն է արդե՞ր բուրժուազիայի խաբեբայական և սուտ «դեմոկրատիային»:

Պրոլետարական դեմոկրատիան, դեմոկրատիա յե միլիոնավոր աշխատավորների համար: Նա իրագործելի յե միայն այն յերկրում, վորտեղ բուրժուազիայից խլված են գործարանները, հողերը, վորտեղ ամբողջ իշխանութիւնը պատկանում է բանվոր դասակարգին, վորտեղ ամուր և հարստատ է բանվոր դասակարգի դաշինքը աշխատավոր գյուղացիութեան հետ:

6. Պրոլետարական դեկտարութեան գործիքը

«Ճնշված դասակարգերի բոլոր շարժումների փորձը, համաշխարհային սոցիալիստական շարժման փորձը մեզ սովորեցնում է, —ասում է Լենինը,—վոր միայն պրոլետարիատին է տրված ի մի միացնելու աշխատավոր և շահագործվող ազգաբնակչության ցրված ու յետամնաց խավերին և տանել նրան իր յետևից»:

Բանվորների, դյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդները հանդիսանում են հենց այն մարմինը, վորը կենսագործում է բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների գոյությունը:

Խորհուրդներում հավաքվում են իրենց գործերը քննարկելու համար բանվորները, աշխատավոր դյուղացիները, ծառայողները, դիտնականները: Բանվոր դասակարգն իր կուսակցության ղեկավարությունում հանդիսանում է խորհուրդների ամենահամախմբված ամենադիտակից կորիզը: Դրա համար նա խորհուրդներում ղեկավարում է աշխատավորական վողջ մասսային, տանում նրան իր յետևից:

Խորհուրդները դյուղում հանդիսանում են աշխատավոր դյուղացիության պրոլետարական ղեկավարության ամուր գործիքը: Այսպիսով խորհրդային իշխանությունը հենց իրեն կադմակերպությունում հեշտացնում է աշխատավոր մասսաների ղեկավարության գործը, նրանց ավանդարդի—բանվոր դասակարգի կողմից:

7. Բոլոր ազգութայինների աշխատավորների յեղբայրության գործիքը

Վոչնչացնել ամեն տեսակի ազգային ճնշում և անհավասարություն, խորհրդային իշխանությունն ամեն կերպ նպաստում է ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր ազգությունների, ժողովուրդների աշխատավոր մասսաների ազգային կուլտուրայի զարգացմանը: Միաժամանակ խորհրդային իշխանությունն ամեն կերպ կադմակերպում է տարբեր ազգությունների աշխատավորների սերտ համագործակցությունը նրանց ընդհանուր պայքարում դասակարգային թշնամու դեմ, խորհրդային իշխանությունը կապիտալիստներից պաշտպանելու գործում, սոցիալիստական շինարարության մեջ: Բոլոր ազգությունների աշխատավորները միասին պայքարում են կուլակի դեմ (կուլակուլի դեմ, բայի դեմ և այլն), միացյալ կարմիր բանակի շարքերում յետ են մղում կապիտալիստների ինտերվենցիայի փորձերը, ոգնում մեկ մեկու սոցիալիստական շինարարության մեջ:

Խորհրդային իշխանությունը բոլոր ազգությունների աշխատավորների յեղբայրության գործիքն է, նրանց տնտեսական և կուլտուրական վերելքի գործիքը:

8. ԻՆՋՊԵՍ ԵՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Խորհրդային իշխանության մարմինների կառուցվածքը վորոշվում է ԽՍՀ Միության կոնստիտուցիայով (հիմնական որենքով): Խորհրդային իշխա-

նության ստորին կաղմակերպությունը հանդիսանում են գյուղական և քաղաքային խորհուրդները: Գյուղական և քաղաքային խորհուրդները պատգամավորներ են ընտրում խորհուրդները շրջանային համագումարի համար, վորը քննում և վճռում է շրջանի կարևորագույն գործերը: Համագումարն ընտրում է գործադիր կոմիտե (Շրջգործկոմ), վորը ղեկավարում է շրջանի ամբողջ խորհրդային աշխատանքը համագումարների միջև: Նշանակալից բնակչություն ունեցող քաղաքներում քաղխորհուրդներն ունենում են իրենց գործադիր կոմիտեները (քաղգործկոմները): Խորհուրդների շրջանային համագումարում ընտրվում են պատգամավորներ մարզային (յերկրային, հանրապետական) խորհուրդների համագումարների համար, վորը քննում և վճռում է մարզի (յերկրի, հանրապետության) գործերը, ընտրում է մարզային գործկոմ (կամ հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտե, կամ յեկրային գործկոմ) և պատգամավորներ ուղարկում խորհուրդների Համամիութենական համագումարին:

Համամիութենական համագումարը ԽՍՀՄ-ի բարձրագույն իշխանությունն է: Նա քննում է սոցիալիստական շինարարության, միջազգային քաղաքականության բոլոր կարևորագույն հարցերը, ընդունում է որոշումներ: Խորհուրդների համագումարն ընտրում է ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտե:

ԽՍՀՄ-ի Կենտգործկոմը համագումարների միջև յեղած ժամանակաշրջանում հանդիսանում է բարձրագույն իշխանությունը Միության մեջ: Նա հավաքվում է համագումարների միջև 3 անգամից վոչ սլակաս նիս-

տերի (սեսիաների), վորոնք քննում և ընդունում են մեր յերկրի ամբողջ կյանքը կանոնավորող որոշումներ: Նույն ձևով աշխատում են նաև ազգային հանրապետությունների կենտգործկոմները: ԽՍՀՄ-ի Կենտգործկոմը (և ազգային հանրապետությունների կենտգործկոմները) իր կազմից ընտրում է նախագահություն: ԽՍՀՄ-ի Կենտգործկոմը բաղկացած է յերկու մասից. Միութենական խորհուրդ և Ազգությունների խորհուրդ: Միութենական խորհուրդը հանդիսանում է ԽՍՀՄ-ի աշխատավոր աղքատնակության ներկայացուցչությունը, վորպես ամբողջություն: Ազգությունների խորհուրդը ընտրվում է ԽՍՀՄ-ի մեջ մտնող բոլոր ազգային հանրապետությունների ներկայացուցիչներից: Նրա նպատակն է խորհրդային կառավարության բոլոր որոշումների և միջոցառումների մեջ արտացոլել հանրապետությունների ազգային առանձնահատկությունները (տնտեսության, լեզվի, առանձնահատկությունները) կենցաղի, կուլտուրայի առանձնահատկությունները): Այսպիսով վոչ մի ազգություն զրկված չէ ԽՍՀՄ-ն կառավարելու անմիջական մասնակցությունից: Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միությունը—ԽՍՀՄ—հանդիսանում է յոթը իրավահավասար հանրապետությունների միացումը—ՌՍՖՍՀ, ՌԱՍՖՀ, (ՌԱԿրայինական), ԲՍՍՀ (Բելուսական), ԱՍՖՍՀ (Անդրկովկասյան սոցիալիստական), Ֆեդերատիվ խորհրդային հանրապետություններ, վորը բաղկացած է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետություններից), ՈւկրՍՀ (Ուկրեկյան) և Տաջիկիստանի ՍՀ-ն: ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի նախագահության գլուխ են կանգնած նրա 7

ներկայացուցիչները—ընկ. Կալինինը (ուռու.), ընկ. Պետրոֆսկին (ուկրալինացի), ընկ. Չերվյակովը (բելուռուս), Մուսաբեկովը (թյուրք), Սոջայեվը (ուզբեկ), Այտակովը (թուրքմեն), Նասրատուլլա (տաջիկ) :

Այս խորհրդային հանրապետությունների կազմի մեջ կան ավտոնոմ խմբ. Հանրապետություններ և ավտոնոմ մարզեր, վորոնք իրենցից ներկայացնում են ավելի հանրապետության տերիտորիայի վրա բնակվող առանձին ազգությունների պետական միացումներ :

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ձեռնում է արդյոք դասակարգային պայքարը պրոլետարական դիկտատուրայի պայմաններում

Մենք բոլորս գիտենք, վոր պրոլետարական դիկտատուրայի հիմնական խնդիրն է խեղդել շահագործողների դիմադրությունը, և իր յետևից տանելով աշխատավոր մասսաներին, կազմակերպել սոցիալիստական շինարարությունը, վերացնել շահագործող դասակարգերի մնացորդները և առհասարակ դասակարգերը, կառուցել առանց դասակարգերի և առանց պետության հասարակակարգ։ Բայց միանգամայն սխալ կլիներ մտածել, թե պրոլետարիատի դիկտատուրան սահմանելուց հետո դասակարգային պայքարը կչքանա, կդադարի։ Հենց այսպես էլ մտածում են աջ ոպորտունիստները։ Բուրժուազիայի և կալվածատերերի դասակարգերը տապալված են, ասում են

Նրանք, կուլակն աստիճանաբար վերադաստիարակվում են, կամաց-կամաց ներաճում սոցիալիզմի մեջ, նշանակում են պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում դասակարգային պայքարն աստիճանաբար կհասնի վոչնչի, կդադարի։ Իհարկե այս խոսակցությունների մեջ ճշմարտության նշույլ անգամ չկա։ Այդ «տեսություններով» աջ ոպորտունիստները փորձում են քնեցնել կուսակցության և բանվոր դասակարգի դասակարգային ղեկավարութունը, ջուր են անում դասակարգային թշնամու ջրաղացին։

Կուսակցությունն անողորմ հակահարված է տալիս այդ «թեորիաներին» և դրանցից բղխող դասակարգային թշնամու— աջ ոպորտունիստների ոպորտունիստական պրակտիկային։

«Դասակարգերի վոչնչացումը,—ասում է Լենինը,—յերկարատև, դժվարին, համառ դասակարգային պայքարի դործ է, վորը կապիտալիստների իշխանությունը տապալելուց հետո, պրոլետարիատի դիկտատուրան հաստատելուց հետո չի չքանում...այլ միայն փոխում է իր ձևերը, շատ տեսակետներից դառնալով ավելի անխնա»։

Շահագործող դասակարգերը (բուրժուազիան, կալվածատերերը, կուլակությունը) քաղաքացիական պատերազմի ժամանակ կատաղի պայքար են մղում պրոլետարական դիկտատուրայի դեմ։ Նրանց հետ միասին այդ պայքարը մեր դեմ մղում եր նաև համալսարհային կապիտալը։ Քաղաքացիական պատերազմում ջարդված շահագործողները յերբեք չծալեցին իրենց զենքերը։ Նեպմանն ու վնասարարը քաղաքում,

խողելու սոցիալիստական շինարարութիւնը։
Կուլակը գյուղում իրենց բոլոր ջանքերն ուղղեցին ձա-
ներանք կազմակերպելեցին, վերադարձին փաշայնէն մե-
քենաները, ջրով լցնեն հանքահորերը, խափանեն դոր-
ծարանների աշխատանքները։ Նրանք փորձեցին քա-
ջայել արանսպորտը, անհաջողութեան մատնել բան-
վորական մատակարարումը, կազմակերպել քաղցը և
սպառումից թաղցնել ապրանքները։ Այս ամբողջ աշ-
խատանքի համար նրանք հսկայական գումարներ ստա-
ցան արտասահմանից, նախկին դուռ արդյունաբերող-
ներէից և կարլաճատերերից, ֆրանսիական և լեհական
գլխավոր շտաբներէից, վրոնք հարձակում ելին պատ-
րաստում ԽՍՀՄ-ի վրա։ Միաժամանակ դատակար-
դային թշնամիները մահափորձեր կազմակերպեցին
մեր արտասահմանյան ներկայացուցիչներին վրա, ամեն
կեր պատերազմի պրովակացիաներ ելին սարքում
ԽՍՀՄ-ի դէմ։ 1928 թվին, Հեռավոր Արեւելքում նրանք
փորձում ելին մեղ չոչափել նաև սվինով, բայց Կար-
միր բանակից խորտակիչ հարկահարված ստացան։
Այս բոլորն, ինպես տեսնում ե ամեն մեկը, բոլորովին
նման չե դատակարդային պայքարի թուլացմանը կամ
չքայմանը։ Այս բոլոր տարիներին չեք նշում նաև
կուլակը գյուղում։ Նա կատաղի դիմադրութիւնն եր
ցույց տալիս սոցիալիստական շինարարութիւնը։
Կուլակը պահում, թաղցնում ե հացը պետութիւնից,
աղիտացիա անում հացամթերումների դէմ, նա սպա-
նում ե գյուղական ակտիվիստներին, հրդեհում ե կո-
տնտեսութիւնները։ Կուլակն իր գլխավոր ուժերն
ուղղում ե, վորպեսզի բանվոր դատակարդին կովեցնի
աշխատավոր գյուղացիութեան հետ, իր յետեից տանի

գյուղացիական ժառանգներին։ Դատակարդային թշնա-
մին հասկանում ե, վոր միայն բանվոր դատակարդի
դեկավարութեամբ բանվորներին և աշխատավոր գյու-
ղացիներին անխախտելի դաշինքի հիման վրա հնարա-
վոր ե սոցիալիզմի հաղթանակը։ Ահա հենց այդ դա-
շինքն ե, վոր նա փորձում ե թուլացնել։

Բանվոր դատակարդին հարկավոր ե վոչ ամեն մի
դաշինք աշխատավոր գյուղացիութեան հետ, այլ
միայն այնպիսին, վորն ամբայնում ե պրոլետարա-
կան դիկտատուրան, նպաստում ե սոցիալիզմի հաջող
կառուցմանը։ Բանվոր դատակարդին հարկավոր ե
այնպիսի դաշինք աշխատավոր գյուղացիութեան հետ,
վորը տանում ե դեպի դատակարդերի վոչնչացումը և
փոչ թե դեպի գյուղական կապիտալիստներին—կու-
լակներին ամբաստնումը։ Այն ինչ, մանր և փոշիացած
գյուղացիական տնտեսութիւնն անընդհատ իր միջից
կուլակութիւնն ե արտադրում։

«...Մամբ արտադրութիւնը — սովորեցնում եր
բնկ. Լենինը, — կապիտալիզմ և բուրժուազիա յե ծնում
միշտ, ամեն ոք, ամեն ժամ, տարեբայնութեմ և մաս-
սայական մասշտաբով»։

Իսկ ի՞նչպիսի ուղի յե նշում պրոլետարական դիկ-
տատուրան, վորպեսզի արմատախիլ անի կապիտալի
արմատները մեր յերկրում։ Այդ ուղին ցույց ե տված
Լենինի ուսմունքով։ Նա կայանում ե նրանում, վոր-
պեսզի յերկրի ինդուստրացման հիման վրա հզոր բա-
ղա ստեղծվի գյուղատնտեսութեանն առաջավոր տեխ-
նիկայով դինելու համար, նրանում, վորպեսզի պետա-
կան խոշոր խորհանտեսութիւնների վորձով, որինա-
կով, համոզելով ապացուցել աշխատավոր գյուղա-

ցիտւթյանը խոչոր, առաջավոր տեխնիկայով քարքա-
վորած, հագեցված կոլեկտիվ տնտեսութեան առավե-
լութիւնները մանր, փոշիացած, յետամնաց մենա-
տնտեսների համեմատութեամբ, նրանում, վորպեսզի
այդ ճանապարհին տանի չքավորների և միջակների
միլիոնավոր մասսաներին, խոչոր կուլակային տնտե-
սութիւնը փոխի՝ խոչոր կոլեկտիվ տնտեսութեամբ
և համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացնի
կուլակութիւնը վորպես դասակարգ։ Այսպես և կու-
սակցութեան դիժը։

Ահա այդ դիժն իրագործելու համար և, վոր բան-
վոր դասակարգին հարկավոր և ամուր դաշինք աշխա-
տավոր գյուղացիութեան հետ։

Ամեն մեկի համար ել պարզ և, վոր այդպիսի դի-
ժը, այդպիսի դաշինքը կուլակութեան սրտով չէ։ Հենց
դրա համար ել կուլակը դաշն կապած նեպմանի և վնա-
սատուի հետ, միջադէպին կապիտալի հետ կատաղի
պայքար և մղում խորհրդային իշխանութեան դեմ։
Նա ձգտում և բոլոր ուժերով խանդարել կոլտնտեսա-
կան շինարարութիւնը, վատաբանել կոլտնտեսութիւն-
ները, խախտել չքավորների և միջակների հավատն
ու վստահութիւնը դեպի նրանց ղեկավարը—բանվո-
րը։ Նա կատաղիորեն դիմադրում և համատարած կո-
լեկտիվացմանը, աշխատում և քայքայել կոլտնտեսու-
թիւնները։

Մենք տեսնում ենք, վոր պրոլետարական դիկտա-
տուրայի գոյութեան յուրաքանչյուր ուրր, ժամը չե-
ցուն և խստագուշակ դասակարգային պայքարով։ Այդ
մարտերում խորհրդային իշխանութիւնը բաշխելիկնե-
րի լենինյան կուսակցութեան և նրա կենտրոնական կո-

միտեյի ղեկավարութեամբ հսկայական հաղթանակնե-
ր տարաւ։ Սոցիալիստական հնգամյակը հաղթանակորեն
կատարւում և չորս տարում։ 1931 թվին ավարտված և
սոցիալիստական եկանոմիկայի հիմքի կառուցումը։
Մեկը մյուսի յետեւից շարքերն են անցնում խորհրդա-
յին ինդուստրիայի գիգանտները։ Արդյունաբերութեան
մեջ կապիտալիստական տարրերը վաղուց արդեն դեպի
հատակն են անցել։ Սոցիալիստական ինդուստրացման
հաջողութիւնների հիման վրա չքավոր և միջակ գյու-
ղացիութիւնը դեռևս 1929 թ. վճռականորեն անցաւ
կոլեկտիվացման ճանապարհին։ Կուլակութիւնը սահ-
մանափակելու և դուրս գցելու քաղաքականութիւնից
կուսակցութիւնը դարձել և կուլակութիւնը վորպես
դասակարգ վերացնելու քաղաքականութեանը։ Մինչև
այժմ կոլեկտիվացված են արդեն բոլոր գյուղացիական
տնտեսութիւնները 63 տոկոսը։ Հացահատիկային վրձ-
ռական շրջաններում արդեն հիմնականում ավարտված
և համատարած կոլեկտիվացումը և կուլակութեան վե-
րացումը վորպես դասակարգ։ Համատարած կոլեկտի-
վացման հիման վրա հաջողութեամբ վերացվում և կու-
լակութիւնը նաև մնացած գյուղատնտեսական շրջան-
ներում։ Հենց դրանով «ուլ-ում» լենինյան հարցն, այ-
սինքն այն հարցը, թե ով կհաղթի—սոցիալիզմը թի
կապիտալիզմը—մեր յերկրում լուծված և լրիվ ու ամ-
բողջապես սոցիալիզմի ոգտին։ ԽՍՀՄ-ն վերջնակա-
նապես ամրացել և զարգացման սոցիալիստական ճանա-
պարհի վրա։

Ջախջախելով վնասարարութիւնը, կուսակցու-
թիւնը և խորհրդային իշխանութիւնը դրա հետ միա-
սին հասան մեծ հաջողութիւնների բանվոր դասա-

կարգի և աշխատավոր դուրսագրութեան շարքերից տեխնիկական նոր ինտելիգենցիայի կարգեր դաստիարակելու գործում: Դրա հետ միաժամանակ սոցիալիզմի հանդուրժյունները, վնասարարութեան մերկացումը վճռական բեկում առաջացրին հին մասնագետների և ամբողջ հին ինտելիգենցիայի մեջ. ինտելիգենցիայի հսկայական մեծամասնությունն այժմ վոչ թե վախի, այլ խղճի մոռը և աշխատում սոցիալիստական շինարարութեան բոլոր ճակատամասերում:

Դասակարգային պայքարում, սոցիալիստական շինարարութեան ընթացքում աճեց ու կոտրվեց դասակարգը, պրոլետարական պետութեան ղեկավարը—բանվոր դասակարգը: Նրա թիվը 1923 թվից մեծացել է 3 անգամ: Անընդհատ աճում և զարգանում է սոցիալիստական մրցակցութունն ու հարվածայնությունը, վորոնք բանվորի դեպի աշխատանքն ունեցած նոր, սոցիալիստական վերաբերմունքի արտահայտություններն են իրենց դործարաններում:

Եւ ավելի յե աճել կուսակցութեան և նրա պաշնորդ ընկ. Ստալինի հեղինակությունը բանվոր դասակարգի ամենալայն մասսաների մեջ: Սերով և հույսերով է հետևում իր հարվածային բրիգադին—Խորհրդային Միութեանը—ամբողջ աշխարհի պրոլետարիատը: Կապիտալիստական յերկրների հարյուր հազարավոր աշխատավորներ պարտաւ են իրենց կրճով պաշտպանելու ԽՍՀՄ-ն կապիտալիստների հարձակումից:

Բայլ՝ չեիկան կուսակցութունը համոզված և հաստատուն կերպով տանում է բանվորական դիկտատու-

րային կատարելու նրա հիմնական խնդիրը—կառուցելու անդադարաւ սոցիալիստական հասարակարգ: Յերկրորդ հնգամյակում այդ խնդիրը կկատարվի:

2. ԿԼԻՆԻ՞ ԱՐԴՅՈՒԳ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Պրոլետարական դիկտատուրայի այս բոլոր հանդուրժյունները նշանակում են արդյոք, վոր դասակարգային պայքարը վերջացել է, վոր 2-րդ հնգամյակում դասակարգային պայքար չի լինի: Վոչ մի դեպքում: Դասակարգային դեռնութեան, դասակարգային թշնամու դեմ պայքարի թուլացումը ներկայումս կլինի դավաճանութուն պրոլետարական հեղափոխութեան դործին:

Թշնամին ջարդ ու փշուր է արված, նա դուրս է չպրտված իր հիմնական դիրքերից, բայց դեռ ևս չի վոչնչացված: Նահանջելով, նա կատաղի դիմադրություն է ցույց տալիս: Նա տեսնում է իր անխուսափելի կործանումը և այդ բանը կրկնապատկում է, նրա խորամանկությունն ու ճարպիկությունը: Դասակարգային պայքարը շարունակվում է, միայն նոր ձևերով:

Ահա այժմ Խորհրդային իշխանությունը կազմակերպում է, ամեն կերպ աջակցում կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտես աշխատավոր դուրսագրիների առևտրի ծավալմանը: Կուլաին ամեն կերպ աշխատում է առևտուրն ոգտադործել իր շահերի համար: Նա փորձում է դնել հացը կոլտնտեսականներից ու մենատնտեսներից և սպիկուլացիա

անել նրանով: Սպեկուլյանտը, վերագնորդը—թշնամի
յե, վորի դեմ պետք է անխնա պայքարել:

Կուլակը փորձում է նաև ուրիշ ճանապարհներով
դիմադրել սոցիալիզմի հաղթական հարձակմանը: Մի
շարք շրջաններում, կուլակները, նրա գործակալները
գողանում են կոլտնտեսային հացը, ուրիշները հասա-
րակական դուլքը, թալանում կոոպերատիվ ապրանք-
ները: Խորհրդային իշխանութիւնը բոլոր աշխատա-
վորներին աջակցությամբ, անողոք կերպով պայքա-
րում է դասակարգային թշնամու դեմ նաև այս ճակա-
տամասում: Հասարակական սոցիալիստական սեփակա-
նութիւնը հայտարարված է սրբադործված: Յեւ նա,
ով փորձ է անում հասարակական սեփականութեան
վրա, ստանում է իր արժանի պատիժը—գնդակահա-
րութիւն կամ յերկարատե ազատազրկում: Վոչ մի
խնայում չի կարող լինել դեպի կուլակային գիշա-
տիչները, սոցիալիստական սեփականութիւնը կո-
ղտադողները:

Դասակարգային թշնամին ձգտում է աղբել դեռևս
կոլտնտեսութիւն չմտած գյուղացիների և մենատնե-
տեսների վրա (կոլտնտեսութիւն մտնելուն վերաբե-
րյալ հարցերում, հացամթերումների ժամանակ և
այլն): Դասակարգային թշնամին ձգտում է աղբել նաև
արդեն կազմակերպված կոլտնտեսութիւնների վրա:

Յուրաքանչյուր կոլտնտեսական կարող է պատմել
կուլակային ագիտացիայի այդպիսի որինակների մա-
սին: Յե՛վ հացամթերումների բաշխման, և՛ յեկամուտ-
աների բաշխման, աշխատանքի կազմակերպման, աշխա-
տանքային կարգապահութեան կարգավորման հարցե-
րում—կուլակը կամ նրա գործակալը փորձում է շեղել

կոլտնտեսականին ուղիղ ճանապարհից, տանել իր յե-
տեից յետամնաց կոլտնտեսականներին: Սխալ է մտա-
ծել, թե յերբ գյուղացին կոլտնտեսութիւն մտաւ, նա
արդեն սոցիալիստ է դարձել: Վո՛չ: Դեռ չատ պիտի
աշխատել կոլտնտեսականներին դաստիարակելու հա-
մար:

«Սխալ կլինի մտածել, վոր կոլտնտեսու-
թիւնների անդամներն արդեն սոցիալիստների յեն
վերածվել,—ասում է ընկ. Ստալինը:—Վոչ, կա-
րիք կլինի դեռևս յերկար աշխատել, վորպեսզի
կարելի լինի վերակազմել գյուղացի-կոլտնտեսա-
կանին, հանել, սպանել նրա անհատականութեան
հոգեբանութիւնը և շինել նրանից սոցիալիստա-
կան հասարակարգի իսկական տոկուն աշխատա-
վոր»:

Առանձին դեպքերում կուլակային ազդեցութիւնը
թափանցում է նույնիսկ խորհտնտեսութիւնները:
Այ, անցյալ տարի յերևան հանվեց, վոր մի շարք
խորհտնտեսութիւններում բերքը վատ է հաւաքված,
վոր միջանի խորհտնտեսութիւններ հաշվառումից
թաղցրել եյին իրենց արտադրանքը: Ո՞ւմն է ձեռնտու
սա: Իհարկէ, դասակարգային թշնամուն:

Բանվորական դիկտատուրայի դեմ մղվող պայ-
քարում դասակարգային թշնամու ողնակներն եյին
և այժմ են. ամեն դուշնի ոպորտունիստները: Կուլակ-
ցութեան դեկավարութեամբ սլոբոտարական դիկտա-
տուրայի հաղթանակները կարող են ձեռք բերվել
ոպորտունիստների դեմ կուլակցութեան հաստատուն,
անշեղ և անողոք պայքարի հիման վրա:

Կուլակցութիւնը յերկարատե պայքար մղեց

տրոցկիզմի դեմ, վորն այժմ գլորվել է ամենամերկա-
պարանոց հակահեղափոխության լազերը: Տրոցկին
կատարելով դասակարգային թշնամիների պատվերը,
աշխատում էր քանդել պրոլետարական դիկտատու-
րայի հիմնական հենարանը՝ բանվոր դասակարգի դա-
շինքը աշխատավոր գյուղացիության հետ: Տրոցկին
ամբաստանում էր, վոր բանվոր դասակարգը չի կարող
գյուղացիությանն իր յետևից տանել դեպի սոցիա-
լիզմ, պնդում էր, վոր բանվոր դասակարգի դաշինքն
աշխատավոր գյուղացիության հետ անհնար է, վոր
ԽՍՀՄ-ում առանց Արևմուտքի հաղթական հեղափո-
խության ողնոթյան կամ կկործանվի, կամ կվերա-
ծնվի: Տրոցկին առաջարկում էր այնպիսի քաղաքա-
կանություն, վորը ձեռքովածք կառաջացներ բանվոր
դասակարգի և գյուղացիության միջև, Խորհրդային
իշխանությունը կհասցներ կործանման և կվերականգ-
ններ կապիտալիզմը: Տրոցկիստներն այս քաղաքակա-
նության մասին մենք ամենի մանրամասն կպատմենք
մյուս «Համկ(բ)կ-ն և նրա գլխավոր դիժը» գրույցի
մեջ:

Կուսակցությունը ջախջախեց տրոցկիզմը, Տրոց-
կուն և տրոցկիստներին վռնդեց կուսակցությունից:
Իսկ յերբ տրոցկիստներն սկսեցին ընդհատակյա հա-
կահեղափոխական աշխատանք տանել, փորձեցին
ստեղծել իրենց հակահեղափոխական կուսակցությու-
նը, Խորհրդային իշխանությունը Տրոցկուն վռնդեց
ԽՍՀՄ-ից: Տրոցկին արտասահմանում ԽՍՀՄ-ի դեմ
կատաղի պայքար էր տանում և այժմ էլ տանում է,
զրպարտում է բանվորներին և կոլտնտեսականներին,
չեղած բաներ հնարում մեր յերկրի և կուսակցության

մասին: Ի՞նչոք սոցիալ-ժաշխատների հետ միասին
Տրոցկին ակտիվ կերպով մասնակցում է մեր դեմ
պատերազմի պատրաստմանը: Տրոցկիզմն այժմ հա-
կահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջո-
կատն է:

«Ձախ» ուղորտունիստները փորձում էյին կոլտն-
տեսական շինարարության մեջ կամավորության լե-
նինյան սկզբունքը փոխել հրամանատարությամբ,
վարչարարությամբ, փորձում էյին բռնի ուժով հար-
կադրել կոլտնտեսություն մտնել այնպիսի աշխատա-
վոր գյուղացիների, վորոնք դեռևս չեն գիտակցում,
չեն համոզվել կոլեկտիվ տնտեսության առավելու-
թյունների մեջ: Հակառակ կուսակցության ցուցում-
ների, թե արտեն այժմ հանդիսանում է կոլտնտե-
սության հիմնական ձևը, «ձախերը» փորձում էյին
բռնությամբ գյուղացիների վրին վաթաթել կոլտնտե-
սային շարժման այլ ձևերը (կոմունա), բռնի ուժով
համայնացնում էյին բոլոր անասունները: Միջակների
և նույնիսկ չքավորների նկատմամբ, վորոնք դեռ
տատանվում էյին կոլտնտեսություն մտնելու հար-
ցում, «ձախ» ուղորտունիստները փորձում էյին կիրա-
ռել նույն միջոցները, ինչ կուսակցությունը կիրա-
ռում էր կուլակի նկատմամբ համատարած կոլեկտի-
վացման հիման վրա՝ ապակուլակացում և այլն: Կու-
սակցությունը ջախջախեց «ձախ» ուղորտունիստնե-
րին, վորոնք ջուր էյին լցնում դասակարգային թշնա-
մու ջրադաշին և փորձում էյին դործնականում վե-
րածնել տրոցկիստական վերաբերմունքը դեպի գյու-
ղացիությունը:

Նույն ձևով վարվեց կուսակցությունը նաև աջ

ոպորտունիստներին հետ, վորոնք վախենալով դատա-
 կարդային պայքարի սրումից յերկրում, առաջարկում
 էյին դադարեցնել հարձակումը կուլակի և նեպամանի
 վրա, զիջումներ անել կապիտալիզմին ինդուստրաց-
 ման տեմպերն իջեցնելու միջոցով, խորհանտեսու-
 թյունների և կոլտնտեսությունների շինարարությու-
 նը կասեցնելու միջոցով: Կուլակությունը համատա-
 րած կոլեկտիվացման հիման վրա վերացնելուն ուղ-
 դած կուսակցության քաղաքականության դեմ աջ
 ոպորտունիստներն առաջադրեցին իրենց քաղաքակա-
 նությունը՝ քաղաքականություն, վորը հույսը դրել է
 «սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման» վրա.
 (աջերի այս քաղաքականության և կուսակցության
 նրանց դեմ մղած պայքարի մասին ավելի մանրամասն
 կխոսենք «Համ Կ(բ)»-ն և նրա գլխավոր դիժը» գրու-
 ցում): Այսպիսով աջ ոպորտունիստները հանդիսանում
 են դասակարգային թշնամու ոգնականն ու պրոլետա-
 րական դիկտատուրայի հակառակորդը: Կուսակցու-
 թյունը ջախջախեց աջ ոպորտունիստներին և վորոշեց,
 վոր նա, ով կողմնակից է և պաշտպանում է աջ ոպոր-
 տունիստների հայացքները, տեղ չունի Համ Կ(բ)ի
 շարքերում: Միանգամայն սխալ կլիներ մտածել, վոր
 աջ և «ձախ» ոպորտունիզմը դադարել է գոյություն ու-
 նենալուց: Դեռ քիչ չեն դեպքերը, յերբ «ձախ» ոպոր-
 տունիստները յերևան են բերում իրենց կոլտնտեսական
 շինարարության մեջ վարչարարությամբ և հարկա-
 դրանքով, անասունները բռնի համայնացնելով և այլն:
 Այլ ոպորտունիզմն էլ, վորն այժմ հանդիսանում է
 գլխավոր վտանգը, հաճախ դուրս է դալիս պաշտպա-
 նելով կուլակային հավասարեցումը, դիմադրու-

թյունը, վորոնք անելով թաղցնել պետության հաշ-
 վառումից բերքի չափը և այլն: Դժվար է տեսնել, վոր
 աջ և «ձախ» ոպորտունիստների և զեպի թեքումնե-
 րը հաշտվողականների վորոնք, կապված շարունակ-
 վող դասակարգային պայքարի հետ յերկրում, արտա-
 ցում են դասակարգային թշնամու ազդեցությունը
 կուսակցության ազանձին անկայուն բնիշների վրա:

Ամրացնել պրոլետարական դիկտատուրան, անխնա
 պայքարել ոպորտունիզմի դեմ

Ահա, թե ինչ բազմադան ձևերով գոյություն ու-
 նի և դեռ յերկար ժամանակ գոյություն կունենա դա-
 սակարգային պայքարը մեր յերկրում: Իսկ մենք չե՞-
 վոր ապրում ենք կապիտալիստական շրջապատվածու-
 թյան մեջ: Կապիտալիստական յերկրները սպիտակ-
 գվարդիականների ակտիվ ոժանդակությամբ, տենդո-
 րեն, որ ու դիշեր պատերազմ են պատրաստում մեր
 դեմ: Բուրժուական պետությունները, ինչպես այդ
 դեմ: Բուրժուական պետությունները, ինչպես այդ
 ցույց տվին արդյունաբերական կուսակցության, մեն-
 չեիկների, Շտերնի դատաւարությունները, անդու-
 կերպով կաս են փնտռում ջախջախված, բայց դեռ
 վերջնականապես չվոչնչացրած դասակարգային թշնա-
 մու հետ մեր յերկրի ներսում: Նրանք մեզ մոտ են ու-
 դարկում լրտեսներ, ընդհատակյա աշխատող հակահե-
 դափոխականներ, սպիտակ-գվարդիական տերրորիստ-
 ներ: Հակասությունները՝ տնտեսական ճգնաժամի
 հարվածների տակ քայքայվող կապիտալիզմի աշխարհի
 և ԽՍՀՄ-ի հաղթական սոցիալիստական շինարարու-
 թյան աշխարհի միջև, սրվում են որ որի վրա: Պաղա-
 դության կարճատև հանգստի ժամկետերը վերջանում
 են: ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պատրաստություննե-

րը, վոր տանում են Ճապոնիան Հեռավոր Արևելքում, Լեհաստանը, Ռուսիան, Չինո-Սլովակիան և ուրիշները Արևմուտքում, դրա ամենացայտուն ապացույցներն են:

Ի՞նչ հետևություններ պետք անել այս բոլորից՝ դասակարգային սլայքարի, մեր պրոլետարական դիկտատուրայի վերաբերյալ հարցերի մասին:

Ահա թե ի՞նչ եր ասում այդ հարցերի նկատմամբ Լեն. Մոլոտովը XVII կուսկոնֆերենցիայում.

Դենլով յերկրորդ հնգամյակում դասակարգերի վերացման խնդիրը, մենք ղեռ վոչ մի ղեպըում չենք կարող և չպետք է ղենք պետություն հարկավոր չլինելու կամ անեյացման հարցը: Ընդհակառակն: Տվյալ դարգացման շրջանում գործը ղնում է ղեռ ամրացնելու պրոլետարական պետությունը, ուժեղացնելու նրա հզորությունը:

Սա բղխում է մեր առաջ ղեռ կանդնած կապիտալիստական տարրերի վերացման, բանվոր դասակարգի իշխանություն ղեռ բուրժուական տարրերի բոլոր և ամեն տեսակի հակահեղափոխական վոգորանքները կտրելու խնդիրներից, աշխատավոր գյուղացիական մատաների և ամբողջապես քաղաքի և գյուղի աշխատավորների վող մասսայի նոր բաղայի վրա վերաշինվելու տեսակետից հրահայտական կադմակերպչական-դաստիարակչական աշխատանքներից:

Արդեն ավելորդ է խոսել այն մասին, վոր արտաքին կապիտալիստական շրջապատվածություն առկայություն սլայմաններում ուգորտունիդմի վատադուն տեսակը կլինք պրոլետարական դիկտա-

տուրայի հզորություն վորեն թուլացում: Սոցիալիդմի կառուցող յերկրի և կապիտալիստական աշխարհի միջև հակասությունների հարաճուն սրումից կարելի է անել մի յեղրակացություն միայն—ամեն կերպ ուժեղացնել պրոլետարական պետությունը, վորպեսդի բարձրացվի նրա ուժը վոչ միայն ներքին դասակարգային թնամու նկատմամբ, այլև նրան թնամի իմպերիալիդմի դասակարգային ուժերի նկատմամբ:

Նույնիսկ կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերացումից հետո, պետությունը կանեյանա միայն աստիճանաբար, յերկարատե ժամանակաշրջանի ընթացքում»:

Յեվ XVII կուսկոնֆերենցիան ղերել է իր վորոշումներում.

«Սոցիալիդմի նոր հաջողությունները բանվոր դասակարգը կապահովի միայն կապիտալիդմի մնացորդների ղեմ մղվող սլայքարում, անողոր հակահարված տալով վոչնչացող կապիտալիստական տարրերի ղիմադրությունը, հաղթահարելով աշխատավորների մեջ յեղած բուրժուական և մանր բուրժուական նախապաշարումները և համառ աշխատանք տանելով նրանց սոցիալիստական վերադաստիարակման համար:

Սա նշանակում է, վոր հետադայումն ել ղեռես անխուսափելի յե դասակարգային սլայքարի սրումն սուանձին մոմենտներում և հատկապես առանձին շրջաններում ու սոցիալիստական շինարարությունն առանձին ճակատամասերում, վոր ղրա հետ միասին ընդդժում և աշխատավորների առանձին խավերի և խմբերի վրա բուրժուական աղդեցություն սլահայանման և մի քանի

դեպքերում ուժեղացման անխուսափելիութունը. դեռևս յերկար ժամանակ պրոլետարիատին ոտար դասակարգային ազդեցութիւններէ՝ բանվորների և նույնիսկ կուսակցութեան մեջ թափանցելու անխուսափելիութիւնը: Նկատի ունենալով այս բոլորը, կուսակցութեան առաջ կանգնած է պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման և ուղղորտունիղմի դեմ պայքարի հետագա ծավալման խնդիրը, հատկապէս աջ թեքման դեմ, վրոպէս գլխավոր վտանգը տվյալ շրջանում»:

3. խորհուրդների հերթական խնդիրները

Խորհուրդները պետական իշխանութեան մարմիններն են պրոլետարական դիկտատուրայի յերկրում: Բնական է, վոր նրանք ղեկավարում են ամբողջ սոցիալիստական հսկայական շինարարութիւնը յերկրում: Այժմ, յերբ մենք հաղթանակորեն ավարտում ենք առաջին հնգամյակը չորս տարում և ձեռնարկում յերկրորդ հնգամյակում անդասակարգ սոցիալիստական իրավահարգի կառուցման, խորհուրդների դերն ու խնդիրները անչափ աճում, մեծանում են: Խորհուրդները պետք է գլխավորեն կապիտալ շինարարութեան—նոր գիղանագործարանների, ելեկտրոկայանների, հանքահորերի, վիթխարի սլանների կատարման համար մղվող պայքարը: Նրանք պետք է ազահովեն ձեռնարկների կողմից իրենց արտադրական սլանների կատարումը, պայքարեն արտադրանքի վրակի համար, ինքնարժեքի իջեցման համար, ընկ. Ստալինի 6 ցուցմունքների կատարման համար յուրաքանչյուր ձեռնարկում: Առանձնապէս մեծ է խորհուրդների դերը կոլտնտեսային շինարարութեան մեջ: Խորհուրդները կանգնած են կոլտնտեսու-

թիւնների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման համար, կուլակութիւնը վրոպէս դասակարգ համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացնելու համար մղվող պայքարի գլուխը: Խորհուրդները պետք է գլխավոր կոլտնտեսային մասնաների՝ կոլտնտեսական դաշտերի բերքատվութեան բարձրացման համար, կոլտնտեսութիւնների և մենատնտեսների կողմից պետական հացամթերումների սլանների որինակելի կատարման համար մղվող պայքարը: Խորհուրդները պայքարում են ամեն կերպ ծավալելու կոլտնտեսական առևտուրը և կոլտնտեսականների ու մենատնտես աշխատավոր դուղացիների առևտուրը, վճռականորեն վերջ տալով կուլակի, սպեկուլյանտ—վերադնորդի՝ աշխատավոր դուղացիութեան աշխատանքի հաշվին հարստանալու փորձերը: Խորհուրդները կանգնած են աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակը բարձնելու հսկայական աշխատանքի գլուխը, ղեկավարում են ժողովրդական կրթութեան, անգրագիտութեան վերացման, բնակարանային հսկայական շինարարութեան գործը, քաղաքների բարեկարգման աշխատանքը: Այս բոլոր հսկայական խնդիրները կատարելու համար Խորհուրդները վճռականորեն վերակառուցում են իրենց աշխատանքը յերեսներս դեպի արտադրութիւն, դեպի գործարան, յերեսներս դեպի խորհտնտեսութիւն և կոլտնտեսութիւն նշանաբանի տակ:

Խորհուրդներն այս խնդիրներից վոչ մեկը չեն կարող կատարել առանց վճռական պայքարի աջ ուղղորտունիղմի դեմ, «ձախ» թեքումների դեմ, և նրանց նկատմամբ բոլոր հաշտվողական վերաբերմունք ունեցողների դեմ: Բոլոր խորհրդային մարմինների աշխա-

Խառնճներէջ ուղորտունխատկան պրակտիկան արբել,
մաքրելով միայն խորհուրդները կանգնած կլինեն իրենց
առաջ կանգնած խնդիրներ թարգմտության վրա: Ուղոր-
տունխատները դուրս խորհուրդներէջ, և Խորհրդային
իշխանության մարմիններէջ—այսպէս և դնում հարցը
յուրաքանչյուր գլխակէջ բանլոր, կոտնտեսական,
կարմիր բանակային:

Խորհուրդներին աշխատանքներին վերականգնման մեջ անհրաժեշտ ե առանձնահատուկ ուշադրություն դարձնել խորհրդային ասպարատում բոլորովրատիվ մի տարրերին դեմ մղվող պայքարին :

Բյուրոկրատիզմն օրինական և անխուսափելի յե-
րևույթ է կայլիտալիստական յերկրների պետական ա-
պարատում: Այնտեղ նա բլխում է այլ ապարատի հնչ
ծաղումից—չինովնիկների բանակից, վրոնք կտրված
են մասսաներից և նշանակված այլ մասսաներին ճնշե-
լու համար:

Ուրիշ և դործը խորհրդային ապարատում, պրոլե-
տարական դիկտատուրայի ապարատում :

Այստեղ բյուրոկրատիզմի առանձին տարրերն արդշունք են դասակարգային ոտար աղղեցությունների, դասակարգային թշնամու փորձերի՝ ձախողելու մեր սոցիալիստական շինարարությունը :

Բյուրոսկրատը ճշտում և մասսաների հետ կենդանի
կապը փոխել թղթի քաջքուկով, խորհրդային որոնք-
ների արագ և ճիշտ կատարումը՝ կանցեյարը չինացով,
բյուրոսկրատն անշատվում, բաժանվում և մասսաներից
թղթով, ղեկավարում կարիկետից, չիմանալով աշ-
խատավորների իսկական կյանքն ու սլահանջները։
Բյուրոսկրատն արգելափակում և կուսակցության և ՍՍՏՔ-

Հողային իշխանություն կարևորադույն ցուցմունքներ
կիրառումը կյանքում :

Բյուրեղաբաշխողը դարձանում է աշխատել, վերստին
ապարատի մեջ է խցկվել դառախարդային թշնամին
խորհրդային ծառայողի դիմակի տակ, աշխատել, յոթ-
տեղից չեն վռնդված աջ և «ձախ» ուղորտունխտները—
դասակարգային թշնամուն ողնոցները:

Կուսակցութեանը և Խորհրդային Էշխանութեան
անինա պայքարում են բոլորովրատիզմի դեմ :

ԿԿՀ—ԲԳՏ-ն սահմանում է սխտեմատիկ պրոդե-
սարական վերահսկողութիւնն ապարատի աշխատանքի
վրա, մաքրում ապարատը ղտակարգային անհաշա-
գատ և ուղղորտուն խտական տարրերից:

Բյուրոկրատիզմի դեմ պայքարի լավագույն մեթո-
ցը՝ մասսաներին ամենալայն կերպով խորհուրդների
աշխատանքների մեջ ներգրավելն է, խորհրդային ա-
պարատի մեջ նոր հաղարավոր բանվորների և գյուղա-
ցիների առաջնությունը:

խորհուրդներն իրենց աշխատանքներում պետք է հանվեն գործարաններին, խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների, հարվածայինների ախտիվի վրա: Նրանց ոգնությամբ նրանք պետք է կազմակերպեն կուսակցության և կառավարության ընդունած վորոշումների և դիրեկտիվների կատարման մշտական հսկողությունը, անողոր կերպով հալածելով քաջչուկ սարքողներին և սպորտունխտներին: Յուրաքանչյուր լանվորի, դյուղացու, կարմիր բանակայինի խնդիրն անպատիժ չթողնել բյուրոկրատիզմի և խորհրդային որենքները չկատարելու արտահայտության և վոչ մի դեպք, նրանց մասին տեղեկացնել խորհրդային ղեկա-

վար մարմիններին, ԿԿՀ—ԻԿՏ—ի մարմիններին, դառնալով թյուրմարտիկներ :

Բյուրոկրատիզմի պայքարը—հեղափոխական ուղինականություն չհամար մղվող պայքարի կարևորագույն մասն է :

Պայքարը հեղափոխական ուղինականության համար՝ Խորհրդային իշխանության բոլոր մարմինների կարևորագույն խնդիրներից մեկն է :

Չե՞ք վոր խորհրդային որենքներ ճշտ կատարումը հանդեսանում է պրոլետարական դեկատուրայի ամրապնդման, դասակարգային թշնամու (կուլակների, միջնորդների, հասարակական սեփականությունը հափշտակողների, սպեկուլյանտների) դեմ մղվող պայքարում բանվորների և աշխատավոր գյուղացիների շահերի պաշտպանության կարևորագույն միջոցներից մեկը :

Այն ինչ, դեռևս քիչ է են դեպքերը, յերբ խորհրդային ապուրատի մեջ խցված բյուրոկրատները, դասակարգային թշնամու գործակալները՝ խախտում են խորհրդային որենքները, բյուրոկրատներն են վերաբերվում խորհրդային որենքների խախտման մասին աշխատավորների տված բողոքներին : Այս տարվա՝ 1932 թվի հունիսին, ԽՍՀՄ Կենտգործկոմը և Ժողկոմխորը հատուկ վորսչումով առաջարկեցին միութենական և ավտոնոմ բոլոր կառավարություններին, դատախազություն և դատական բոլոր մարմիններին, բոլոր գործկոմներին՝ ստուգել պաշտոնական անձանց կողմից որենքները խախտելու վերաբերյալ բոլոր հայտարարությունները, ապահովել այդ բողոքների և հայտարարությունների արագ քննությունը և խստորեն պատ-

ժել (մինչև դատի տալը) որենքները խախտող բյուրոկրատներին, վորոնք ընացնում են աշխատավորների բողոքներն ու հայտարարությունները :

ԽՍՀՄ Կենտգործկոմը և Ժողկոմխորն առաջարկեցին ստուգել, թե ինչպես է տարվում շրջգործկոմների և գյուղխորհուրդների կողմից տուգանքների և պատիժների նշանակումն այն հաշվով, վորպեսզի վճռահանորեն վերացնել որենքների խախտման բոլոր դեպքերը, վերցնել սխալ նշանակված պատիժները :

Ամենայն վճռականությունը կիրառելով համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության վերացումը, Խորհրդային իշխանության բոլոր մարմինները դրա հետ միաժամանակ պետք է ուղարկված հետևեն, վորպեսզի «ձախ» ուղղորդված խախտումները, դասակարգային թշնամու գործակալները չկարողացան, ինչպես այդ տեղի ունեցավ առանձին դեպքերում, փորձել կուլակաթափ անելու միջակ և նույն իսկ չբավոր տնտեսությունները, տալ նրանց կայուն առաջադրանքներ և այլն : Կենտգործկոմը և Ժողկոմխորն իրենց վորոշման մեջ հատկապես ընդգծում են հեղափոխական ուղինականության պահպանման խնդիրը կոլտնտեսություններին ու կոլտնտեսականների վերաբերմամբ : Վորոշումն առաջարկում է անչեղորեն յենթարկել խիստ պատասխանատվության կոլտնտեսական շինարարություն հիմնական սկզբունքները, կոլտնտեսությունների վարչությունների և այլ մարմինների ընտրությունները խախտելու համար, կոլտնտեսությունների գույքը և նրանց դրամական միջոցները ինքնակամ կերպով տնտրվելու համար, առանց կոլտնտեսականների համաձայնության, ինքնակամ կերպով կոլտնտեսություն-

ըը վերակառուցելու համար, նրանց խոշորացման համար և այլն: Կենտրոնացումը և ժողովրդավորական շուկայի միաժամանակ պարտավորեցնում է իշխանութ-
յան բոլոր մարմիններին ճշտությամբ կիրառել, կո-
տնտեսությունների և կոլտնտեսականների առևտրի
ծավալման, կոլտնտեսական շուկաներ ստեղծելու և
անասունները, թռչունները հարկադիր համայնացումն
արգելելու վերաբերյալ խորհրդային որոշումները:

Սորհուրդների կարևորագույն խնդիրը հանգիստ-
նում է հասարակական սոցիալիստական սեփականու-
թյունը պահպանելու վերաբերյալ որոշել կենսագոր-
ծումը: Դատարանական և դատախազության մարմին-
ները չեն կարող ինչպես հարկն և կատարել իրենց խն-
դիրներն այդ բնագավառում, յեթե նրան ուղեկցող
չզան խորհրդային ամբողջ ակտիվը, ընտրողների,
բանվորների, կոլտնտեսականների, կարմիր բանակա-
յինների—վոյշ մասսան:

ԿՈՒՍՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱ
ՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինքնակալության ազգային քաղաքականությունը:

Ցարական Ռուսաստանում բնակչությունը բաժան-
վում էր յերկու մասի՝ ռուսներ և «այլազգիներ»: Ռուս-
ները կազմում էին բնակչության 43 տոկոսը, «այլազ-
գիները» — 57 տոկոսը: «Այլազգի» արհամարհական ա-
նունը կրում էին մոտավորապես հարյուր միլիոն
մարդիկ՝ զանազան ազգություններից (ուկրաինացի-
ներ, լեհեր, ֆիններ, վրացիներ, հայեր, ուղբեկներ,
բաշկիրներ, կիրգիզներ, լեզգիներ և այլն), վորոնց

տարբեր ժամանակներում նվաճել էին ռուսական ցա-
րերը:

Բուրժուազիան և կալվածատերերը անխնա չա-
հադործում էին Ռուսաստանի ամբողջ բնակչու-
թյանը, անկախ նրանից, թե ինչ ազգի էին նրանք պատկանում:
Սակայն կախյալ ազգերը, այսպես կոչված «այլազգի-
ները» յենթարկվում էին հատուկ ճնշման: Նրանց
հեշտ եր չահադործել: Հարյուր տարվա ընթացքում
ցարական կառավարության քաղաքականությունը, այդ
ժողովուրդների նկատմամբ, նրանումն էր, վորսեպի
նրանց դարձնեն աշխատող անասուններ իրենց չահա-
դործողների համար: Ցարական կառավարու-
թյունը այդ ազգերին պահում էր կատարյալ խավարի և իրա-
վադրկության մեջ, պահպանում էր նրանց կուլտու-
րական և տնտեսական հետամնացությունը: Ռուսաց
լեզուն միակ լեզուն էր, վորով թույլ էր տրվում տու-
թել թերթեր, սովորեցնել դպրոցում, ներկայացումներ
տալ: Ուրեմն միլիոնավոր մարդիկ, վորոնք չէրտեսին
ռուսաց լեզուն, հեռու էին պահվում կուլտուրական
կյանքից, դրադիտությունից, դրբից, թերթից: Այն
նամակը, վորի վրա հասցեն դրված էր լինում վոչ ռու-
սերեն, փոստի չինովնիկը զղվանքով զամբուլուն էր նե-
տում: Կառավարական հիմնարկություններում խոսում
էին միմիայն ռուսերեն: Վոչ մի լուսավորական աշ-
խատանք չէր տարվում ցարական Ռուսաստանի աշ-
դությունների մեջ: Իսկ ով փորձ էր անում այդպիսի
աշխատանք տանել, նրան բանտ էին նստեցնում:
Ժողովուրդները հանձնված էին մոլլայի, տերտերի,
իշխանի, լամայի դեկավարությունը, վորոնք ծախված
էին ցարական կառավարությանը և ազգային կուլա-

կուլթյանը, վորոնք ամեն կերպ պաշտպանում եյին շահագործողներին ճնշումը:

Չարժե խոսել այն մասին, վոր Ռուսաստանի հարստահարված ժողովուրդները չունեյին պետական վոչ մի ինքնուրույնութիւն: Համառուսաստանյան ինքնակալը, միաժամանակ թագաւոր եր և՛ Լեհաստանի, և՛ իշխան Ֆինլյանդիայի, և՛ թագաւոր «Սպլիտակ և Փոքր Ռուսաստանի» (այսպես եյին կոչվում Բելոռուսիան և Ուկրայինան) և այլն, և այլն, և այլն:

Թուրքիստանում նստում եր դենիւրալ-նահանգապետ, Լեհաստանում, Կովկասում—ցարական վոյսարքաներ (մեծ իշխաններ), ամեն տեղ ռուս չինովնիկն եր կարգադրութիւն անողը, ռուսական դավադանն եր գործ տեսնում, թագաւորում եր ռուսական ավինը:

Իսկ ռուս բանվորին և գյուղացուն ջանում եյին դատարարակել դեպի բոլոր «վոչ-քրիստոնեաները»—դեպի «այլադղինները» ատելության վոգով: Աղդային յերկպառակութիւն դցելը ժողովուրդների մեջ, այդ իշխանության մշտական հոգան եր: Ռուսներին զրդուում եյին հրեաների դեմ, վրացիներին հայերի դեմ, հայերին թուրքերի դեմ, ուկրայինացիներին՝ լեհերի դեմ և այլն:

Աղդային յերկպառակության հրահրումը ցարական կառավարության ծրագրված և կաղմակերպված քաղաքականութիւնն եր: Ինչո՞ւ: Վորովհետեւ մի աղդութիւն մյուսի դեմ զրդուելով, կալվածատերն ու կապիտալիստը նկատի ունեյին յետ պահել այդ աղդութիւններին աշխատավորների ուշադրութիւնն իրենց իսկական ընդհանուր թշնամուց—կալվածատերերի ու կապիտալիստների դասակարգից: Աղդային յերկպառա-

կուլթիւնը պետք ե խանդարեր դասակարգային համախմբվածության ամանը: Հեղափոխական շարժման ամանը:

Ուրեմն ինչ եյին ներկայացնում իրենցից ցարական Ռուսաստանի ծայրամասերն ու ռայոնները: Նրանք ռուսական իմպերիալիզմի գաղութներն եյին: Ծիշտ այնպես, ինչպես Հնդկաստանը անգլիական իմպերիալիզմի համար կամ Մարոկկոն Ֆրանսիացիների համար:

Ռուսաստանի ժողովուրդները յենթակա եյին ամենախիստ գաղութային շահագործման: Սիրիբում ու Միջին Ասիայում, Կովկասում ու Ղրիմում, Կարելիայում և Բաշկիրիայում գործարաններ ու Փարբիկներ չեյին կառուցում: Նրանք յեռակի թանդ դնով պետք ե դնեյին ներմուծվող ապրանքներ և աժան դնով վաճառել հաց, անասուններ, անտառանյութ—հումուլթ, հալիտյան մնալով կապիտալիստների համար վորպես գյուղատնտեսական ու անասնաբուծական հետամնաց գաղութներ: Այսպես ավելի ձեռնուռ յեր կապիտալիստներին, հեշտ եր շահագործել յերկրի այդ մասերը: Նման քաղաքականության պատճառով վերացվում եր աղդային բանվորական դասակարգի առաջացումը: Աղդային ծայրամասերում հեղափոխական շարժման արգելակվում եր՝ այնտեղ սրտիտարիատ չլինելու կամ լիովին բացակայության պատճառով, վորն առաջնորդն եր հանդիսանում աշխատավորների կապիտալի դեմ պայքարում:

2. «Դեմոկրատիայի» յերկրներում.

Միգուցե ավելի լավ է աղբուծյունների դրուժյունը բուրժուական «Դեմոկրատիայի», «աղատուծյունների», «հավասարութեան» յերկրներում:

Կարգանք մի փոքրիկ կտոր հնդկական ֆէրու Ս. Տադորի գրքից, վորը նկարագրում է իր դիաուլությունները Հնդկաստանի գյուղատնտեսական բանվորների կյանքից:

«...Յերեկոյան մթնաշաղն իջաւ Շերաստունջի») վրա: Ուղղակի քանդած գետնի մեջ բանվորների խորճիթները, վոչ ավելի, քան մեկ մետր բարձրութեամբ, կանգնած են առանց լուսամուտների, առանց դռների, լաթերով կախված մուտքերով: Բանվորները շարքերը դանդաղ մոտենում են խորճիթներին: Խորճիթները մի քիչ կենդանանում են: Սակայն վոչ յերկար ժամանակով: Շտապով նորից նրանք հանգստանում են: Կուլինները քնած են:

Լուսանում է:

Ուժգին սուլոցը խանգարում է անդորրությունը: Յերեխաները բլաւում են, մայրերն աշխատում են հանգստացնել նրանց: Լուսում են վերակացուի կոպիտ հայհոյանքները: Խորճիթներից դուրս թափված, ցրիվ յեկած մարդիկ հավաքվում, դանդաղ խմբերի յեն բաժանվում—առաջին շարքում տղամարդիկ, հետո կանայք խոշոր դամբուղները մեջքներին դրած, իսկ նրանց յետևում քնահարամ, հյուծված յերեխաները: Պլանտացիաներում աշխատող յերեխաները—նրանցից միքանիսը 4—5 տարեկանից վոչ մեծ—աւելի յեն, քան տղամարդիկ և կանայք: Բոլորի յերեսների վրա միև-

նույն արտահայտությունն է—անհուսութեան, հնազանդութեան և հուսահատութեան արտահայտությունը:

Հաճախ անտանելի շոգին, հաճախ անձրևային հեղեղների տակ աշխատում են տասներկու—տասնուչորս ժամ: Յերկար աշխատանքից խոնավ դաշտերում շատերը ծանր հիվանդանում են, չատերը մեռնում են արևահարությունից, շատերը մաշարիա յեն ստանում, վոր ել յերբեք չեն առողջանում: Մահը համաճարակ է յերեխաների մեջ, սակայն մեռածների տեղ դալիա են նոր կուլիներ:...

Ահա մի պատկեր, վորը բնորոշ է դաղութային շահագործման սխտեմի համար իմպերիալիզմի ամեն մի դաղութում: Յերբեք յետ չմնալով ցարական կառավարությունից, ամբողջ աշխարհի կապիտալիստները դաղութների աշխատավոր մասսաներին և կախյալ յերկրներին սղահում են չլսված աղքատութեան, խաւարի և իրավադրկութեան մեջ: Սովամահությունը Հնդկաստանում մշտական յերեւոյթ է: Տարեկան տասնյակ հազարներով հնդկիկներ են մահանում սովից:

Հնդկաստանի բնակչությունը համարյա գլխովին անդրադետ է: Միանդամայն նման պատկեր ենք տեսնում մենք նաև Փրանսիական իմպերիալիզմի դաղութներում—Սիրիայում, Մարոկկոյում, Հնդկաչինում և մյուս դաղութներում: Այդ պատկերն ամեն տեղ նույնն է:

«Աշխարհը բաժանվում է յերկու մասի՝ ֆինանսական կապիտալով ոժտված և յերկրագնդի բնակչության հսկա մեծամասնությունը շահագործող մի բուռն քաղաքակրթված աղքերի բանակ և այդ մեծամասնությունը կաղմող դաղութները և

1) Գյուղ Աստիլի գաւառում (Հնդկաստանում):

կախյալ յերկրների ճնշված ու շահագործվող ժողովուրդների բանակ», ասում ե ընկ. Ստալինը:

Ճիշտ այնպես, ինչպես ցարական կառավարութունը, «դեմոկրատիկ» յուրաքանչյուր բուրժուական կառավարութուն դրդուում ե մի աղգության մյուսի դեմ:

Հնդկաստանում կապիտալիստները հրահրում են մուսուլմաններին հնդիկների դեմ, Պաղեստինում հրեաներին արաբների դեմ, Ամերիկայում—ամերիկացիներին նեգրերի դեմ, Ֆրանսիայում—ֆրանսիացիներին գերմանացիներին՝ և իտալացիների դեմ, Չեխո-Սլովակիայում—մադյարներին չեխերի դեմ և այլն: Բուրժուազիան անխնա հաշվեհարդար ե տեսնում այն ճնշված աղգությունների հետ, վորոնք ամենաչնչին վործն են անում ազատագրվելու: Տարի չի լինի, վոր անգլիական կառավարութունը Հնդկաստանի, Յեդիստոսի, Իրլանդիայի աշխատավորների արյունը չթափի: Ֆրանսիական սավառնակները համարյա ամեն ամիս ուումբեր են գցում Մարոկկոյի ու Սիրիայի անհաղանդ գյուղերի վրա: Տառնյալ հաղարներով հեղափոխական բանվորներ և դյուղացիներ հրացանաղարկ են լինում և նետվում բանտերը:

Սակայն կարո՞ղ ե այդպես լինել միայն իմպերիալիզմի հեռավոր արևելյան դաղութներում: Կարո՞ղ են բուրժուական պետությունների ներսում ալրող կախյալ աղգությունները լավ դրության մեջ լինել:

Բուրժուական Յեվրոպայի հենց սրտում աղգությունների դրության կլասիկ օրինակ կարող ե լինել Լեհաստանը: Խոսք տանք բուրժուական թերթերին, վորոնք ի վիճակի չեն թաղցնել ճշմարտությունը:

Անգլիական բուրժուական թերթ «Մանչեստեր

Գաղղիտներ» նկարագրելով Լեհական Ֆաշիզմի պատժիչ արշավանքները Արևմտյան Ուկրայնայում, գրում ե՝

«Լեհական կառավարությունն ուղարկել եր պատժիչ արշավանքներ 700 դյուղերը: Հաղարավոր մարդիկ բանտ եյին նետված: Մեծ քանակությամբ գրադարաններ, միություններ և կոոպերատիվներ թալանի եյին յենթարկված և վոչնչացված: 1920 թվից մինչե 1925 թիվը ուկրայնացիները կորցրին 2607 դյուղ: Հաղար ուկրայնացի աշակերտներից 79-ը միայն կարող եր ուկրայնական դյուղ հաճախել, իսկ 921 աշակերտ եր ուկրայնական դյուղ հաճախել Լեհական դյուղները: Հարկադրված եյին հաճախել Լեհական դյուղները: Արևելյան Գաղղիայում և Վոլինիայում 200 հաղար Արևելյան Գաղղիայում և Վոլինիայում միություն-կաններին: Լեհական դյուղատնտեսական միությունները ստացան մի տարվա ընթացքում 79 միլիոն դրոտի, իսկ ուկրայնական միությունները վոչինչ ստացան»:

Այստեղ պետք ե նշել, վոր Լեհական թերթերը կարող եյին նույնը գրել իրանդացիների դրության մասին Անգլիայում, ինչի մասին, վոր անգլիական թերթերը, իհարկե, լում են:

Ահա և ուրիշ պատկերներ, վորոնց մասին թաղցնել չեն կարող նույնիսկ բուրժուական թերթերը: Ուկրայնական բուրժուական թերթերը, վորը հենց Լեհաստանում ե գտնվում, գրում ե՝

«Անցյալ տարի, սեպտեմբերի 16-ին, առավոտյան ժամի 8-ին Գալս դյուղը մտավ (Լվովի մոտ) Ուլանի գնդից մի հեծելապաշտ: Արդեն հենց դյուղ չմտած ուղանները մտրակներով ջարդեցին այն դյուղացիներին, վորոնք դաշտ եյին դուրս յեկել: Գյուղացիներին ծեղցին նրա համար, վոր գլխարկները չեյին հանել դրո-

չի առաջ: Գյուղ մտնելով, հեծելավաշտի պետը իր մոտ կանչեց ավազին: Բայց վորովհետև ավազի բացակայում էր, ձեռքեց ավազի տեղակալին, հայտարարելով նրան, վոր գյուղի վրա պատերազմական տուգանք է դնում, վորը պետք է վճարեն յերկու ժամյա լնխացքում: Պետը սպառնաց, վոր յեթե տուգանքը ժամանակին չի վճարվի, ուլաններն իրենք այդ գործը կկատարեն: Պատերազմական տուգանքի կարգով հեծելավաշտի պետը պահանջում էր 210 փութ վարսակ, 700 ձու յերկու խոհանոցի համար, յերկու խոզ, ամեն մեկը վոչ պակաս 200 կիլոգրամ քաշով, 500 լիտր կաթ, 100 կիլոգրամ բրինձ, 25 կիլոգրամ շաքար: Գյուղացիները շտապեցին հավաքել և տալ այդ տուգանքը, վորովհետև զիտեյին, թե ինչ է նշանակում «ուլանները կհավաքեն»:

Ուլանները տեղավորվեցին գյուղում, հրամայեցին մաքրել իրենց ձիերին ու ձիասարքը: Իրենց հետ բերած ցուցակով Անդրյուսին ջրաղացականի մարազը կանչեցին մի շարք գյուղացիներին: Այդտեղ գյուղացիներին պառկեցրին նստարանների վրա ուլաններից վոմանք վոմաներն եյին բռնում, վոմանք գլուխները և այնքան ծեծում, վոր նրանք ընկնում եյին ուշաթափ, ապա ջուր եյին լցնում նրանց վրա և կրկին ծեծում: Առանձնապես խիստ ծեծեցին «Պրոստիտա» ընթերցարանի գրադարանապետ Իվան Ռոմանիչին: Նրան մի քանի անգամ ջրով ուշքը վրա եյին բերում և ապա ծեծում: Ամենից շատ ծեծեցին նաև կոոպերատիվ վարիչին — Լուկաչ Դմիտրուն, Միքայիլ Տիտուկային, Գրինկոյին, վորը մեռավ ծեծից, ստանալով 500 հարվածներ:

Խիստ տուժեցին նաև Միքայիլ Մանդիլիչը, նրա վորդի Ռոմանը և աղջիկը Սոֆիան նրա համար, վոր փորձում եյին պաշտպանել իրենց հորը: Տեղական կոոպերատիվում վոչնչացված էր սարքավորումը, բոլոր ապրանքների վրա նալթ եյին թափել և փչացրել:

Այդպիսի թալան էր կազմակերպված նաև Խորոսյակիչի գյուղում: Հետևյալ որը, յերբ ուլանները առավոտյան ժամի 5-ին հեռացան, ամբողջ ժողովրդին տներից դուրս եյին քշել: Հրամայված էր կանգնել ճանապարհի յերկայնությամբ տոնական հագուստով և վողջունել հեռացող զինվորականներին:

Պրոքիսլովիչի գյուղում ուլաններն ավերել եյին «Պրոսվտի» ընթերցարանը, վոչնչացրել բոլոր գրքերը, նկարները, քանդել լուսամուտները:

Հոկտեմբերի 11-ին, Խլեբովցի գյուղում գործառն հրամատարի — սպայի և զինվորական բժիշկի ներկայությամբ խիստ ծեծի յենթարկեցին 70 տարեկան մի ծերունու՝ Կորոլ Ալեքսեյ Կիսլուով: 5 զինվոր նրան ծեծեցին շղթաներով, յերեք անգամ ջրով նրա ուշքը վրա բերին և կրկին ծեծեցին: Զոհատի հրամատարը, իր մոտ կանչելով գյուղացիներին, ասում էր նրանց. «Կառավարությունը մեզ այստեղ է ուղարկել, վորպես պատժիչ ձեռք. նրա համար, վոր դուք վատ եք վերաբերվում պետությանը: Յեթե չուղղվեք, մենք նորից ձեզ մոտ կդանք մի քանի որից հետո, իսկ յեթե այդ էլ չի ոգնի, յերրորդ անգամ կդանք»:

Վորշտովիչի գյուղում սեպտեմբերի 14-ին հայտնվեց պատժիչ ջոկատ: Բոլոր տղամարդ գյուղացի-

դատարեկախություններով՝ «ազգերի համասարու-
թյան», «կախյալ ազգերի ինքնուրույն կուլտուրայի
իրավունք ունենալու» և այլն թեմաների մասին:

Ի՞նչոր այդ խոսակցությունները վոչ այլ ինչ են, յե-
թե վոչ խաբեբայություն, վորովհետև առանց վոչըն-
չացնելու այն դատակարգելին, վորոնք հանդես են դա-
լիս, վորպես ազգային ճնշման ստեղծողներ ու անցկաց-
նողներ, այսինքն՝ առանց վոչնչացնելու բուրժուազիա-
յին և կալվածատերերին, հնարավոր է ազգային հար-
ցը լուծել հոգուտ աշխատախոհների: Իսկ բուրժուա-
զիային վոչնչացնելու յերբեք մտադիր էին սոցիալ-
ֆաշիստները, նրանք հանդիսանում են նրա ամենահու-
սալի ծառաները: «Ազգային համասարության» հան-
դիսավոր հայտարարությունը, անթիվ-անհամար դեկ-
լարացիաները «ազգային համասարության» մասին—
ահա թե ինչով էլին դբադված II ինտերնացիոնալի կու-
սակցությունները, վորոնք սքողում են այն փաստը,
վոր ազգերի համասարությունն իմպերիալիզմի որոք,
յերբ ազգերի մի խումբ (փոքրամասնությունը) ապրում
ե ազգերի մյուս խմբին չահագործելու հաշվին, — դրանք
ծաղրանք են ճնշված ժողովուրդների նկատմամբ», —ա-
սում ե ընկ Ստալինը:

Այսպես՝ կապիտալիստական յերկրների ազգային
քաղաքականությունը — դադուլթները թալանելու, ժո-
ղովուրդների ազգային ճնշման, ազգային յերկառա-
կություն սերմանելու քաղաքականություն ե: Սոցիալ-
ֆաշիստները հանդիսանում են կապիտալի այդ քաղա-
քականության հենարանը: Առանց խորոտակելու բուր-
ժուազիայի իշխանությունը, առանց պրոլետարական

հեղափոխության, հնարավոր է լուծել ազգային հարցը
հոգուտ աշխատավորների:

3. Խորհրդային իշխանության ազգային քաղաքա- կանությունը

Լենինյան, բայլէիկյան կուսակցությունն իր դո-
յության հենց սկզբից անխնա մերկացնում եր II ին-
տերնացիոնալի ազգային քաղաքականության դավա-
ճանական եյությունը: Նա պայքարում եր ազգային
ճնշումը կատարելապես վոչնչացնելու համար, յուրա-
քանչյուր ազգի ինքնորոշման իրավունքի համար մինչև
ինքնուրույն պետություն ստեղծելը: Բայլէիկիներն
հարցը դիտում էլին վորպես պրոլետարա-
կան հեղափոխության հարցի անբաժան մասը, վորպես
բանվոր դատակարգի դիկտատուրայի հարցի անբաժան
մի մասը: Հանձին ճնշված ազգերի բայլէիկիները տե-
նում էլին պրոլետարիատի դաշնակիցներին հզոր ու-
նում գերվներին՝ նրա դեկալարությամբ ընդհանուր թշնա-
մու — իմպերիալիզմի դեմ պայքար մղելու համար, հա-
մաշխարհային սոցիալիստական հեղափոխության շա-
հերի համար:

«Լենինիզմը, —ասում ե ընկ Ստալինը, —ազգա-
յին հարցը լայնահաղորդ դեկլարացիաների բար-
ձունքներից ցած իջեցրեց դետին վրա, հայտարարե-
լով, վոր «ազգերի համասարության» մասին դեկլարա-
ցիաները, վորոնք ամրապնդված էին պրոլետարական
կուսակցությունների կողմից ճնշված ժողովուրդների
աղաոագրական պայքարի ուղղակի սաշտպանությամբ,
նրանք հանդիսանում են դատարկ և կեղծ դեկլարացիա-

ներ: Այդպիսով իսկ ճնշված աղբերի հարցը դարձավ ճնշված աղբերին պաշտպանելու, ոգնելու, իսկական սթանդակության հարցը՝ նրանց իմպերիալիզմի դեմ մղած պայքարում, աղբերի իսկական հավասարության համար, նրանց ինքնուրույն պետական դոյության համար» — և այնուհետև:

«Լենինիդմն ապացուցեց, Վոր աղբային հարցը կարող է լուծվել միայն կապված և պրոլետարական հեղափոխության հարցի վրա, Վոր հեղափոխության հաղթանակի ուղին Արևմուտքում ընթանում է իմպերիալիզմի դեմ գաղութների և կախյալ յերկրների ազատագրական շարժման հետ հեղափոխական դաշինքի միջով»:

Պրոլետարական հեղափոխության հաղթանակը մեր յերկրում վոչնչացրեց աղբային անհավասարությունը, ազատագրեց աշխատավոր մասսաներին աղբային ճնշումից:

Խորհրդային իշխանության առաջին դեկրետներից մեկը հայտարարում էր.

1. Հավասարություն և անկախություն Ռուսաստանի ժողովուրդներին:

2. Իրավունք տալ ազատ ինքնորոշման մինչև անջատումը և ինքնուրույն պետություն կազմելը:

3. Վերացնել բոլոր ի ամեն տեսակ աղբային և աղբային-կրոնական առանձնաչորհումներն ու սահմանափակումները:

4. Այդ նշանակում է, Վոր յուրաքանչյուր աղբություն հնարավորություն է ստացել ինքնուրույն կերպով լուծելու իր պետական կառուցվածքի հարցը: Այդ

նշանակում է, Վոր նախկին տիրող վելիկուռուս աղբի բոլոր արտոնությունները (մենաչորհումները) վոչնչացված են, Վոր բոլոր աղբերը ձեռք են բերել իրական հավասարություն:

Հակահեղափոխության բոլոր ուժերն, իհարկե, այդ դեկրետի առթիվ կատաղի վոռնոց բարձրացրին. «Բայլչեիկները Ռուսաստանը քանդում են: Վե՛րջ Ռուսաստանին», — բղավում էյին նրանք: Այո՛, վերջ այն Ռուսաստանին, Վորը ժողովուրդների բանտն էր, իրոք այդ Ռուսաստանին վերջ տրվեց:

Մեկը մյուսի յետևից կազմակերպվում ու առաջանում էյին աղբային խորհրդային պետությունները:

Քաղաքայիական պատերազմում սպիտակ-դվարդիականները կռիվ էյին մղում մեր դեմ լողունդ ունենալով՝ «հանուն միասնական անբաժան Ռուսաստանի»:

Այնտեղ, Վորտեղ հայտնվում էյին սպիտակ բանդաները, իսկույն պետական լեզու էյին հայտարարում ոռուսաց լեզուն: Սպիտակ-դվարդիականները սահմանում էյին աղբերի իրավադրկության նախկին կարգը, լայնորեն անց էյին կացնում հրեական ջարդեր:

Խորհուրդների շուրջը համախմբվեցին բոլոր նրանք, ովքեր պայքարում էյին աղբային ճնշումը Վոչնչացնելու համար: Ռուսական և ոտաերկրյա իմպերիալիզմի դեմ բոլոր աղբերի աշխատավորները բանվոր դասակարգի ղեկավարութամբ ձեռք ձեռքի տված կռվում էյին կարմիր բանակի շարքերում: Այդ պայքարում ամուր հիմք դրվեց մեր յերկրի բոլոր ժողովուրդների յեղբայրությանը: Այդ պայքարում անհետանում էր տարբեր աղբությունների փոխադարձ ան-

վատահոլթյունը: Բոլոր աղքություններն աշխատա-
վորները տեսնում եյին, վոր Խորհրդային իշխանու-
թյունը—նախկին ճնշված ժողովուրդների ազատ դար-
գացման իշխանությունն է, վոր այդ իշխանությունը
բոլոր աղքություններին դեպի ճակատամարտ է տանում
ընդհանուր թշնամու դեմ:

«Հատկապես նրա համար,—ասում է ընկ.
Ստալինը,—վոր մենք իրականացրինք աղքու-
թյունների ինքնորոշումը, հատկապես դրա հա-
մար մեզ հաջողվեց վռնչացնել ԽՍՀՄ տարբեր աղ-
քությունների աշխատավոր մասսաների փոխա-
դարձ անվտանգութունը և միախմբել աղքու-
թյուններին կամավորականության սկզբունքնե-
րով մեկ դաշնակից պետության մեջ»:

4. Խորհրդային հանրապետութիւնների միու- թյունը

Քաղաքացիական պատերազմից հետո, տարբեր աղ-
քությունների պրոլետարիատն ու աշխատավորներն ի-
րենց կուսակցությունների ղեկավարութեամբ հարց
դրին ստեղծելու Խորհրդային սոցիալիստական Հանրա-
պետություններին Միութիւն: Այդ Միութիւնը, վորի
մեջ յուրաքանչյուր աղքություն պահպանում է իր ինք-
նուրույնութիւնը, պետք է փոխադարձ աջակցութիւն
ցույց տա ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներին սոցիալիստա-
կան շինարարության դործում: Նա պետք է համախըմ-
բեր բոլոր աշխատավորների ջանքերը պաշտպանելու
համար նվաճած հաղթանակն իմպերիալիստների բոլոր
և ամեն տեսակի հարձակումներից:

Ահա թե ինչ է ասված ԽՍՀՄ ստեղծելու ֆափն
դեկլարացիայում:

«Պատերազմի տարիներն անհետեանք չանցան:
Քանդէրնված դախտեր, կանաղ ուռած դործարաններ,
քայքայված արտադրողական ուժեր, և հյուժված
տնտեսական միջոցներ, վորոնք վորպէս ժառանգու-
թիւն եյին մնացել պատերազմից, առանձին հան-
րապետութիւնների ջանքերը բաժանական չեյին այդ
բոլորի տնտեսական շինարարութեան համար: Ժո-
ղովրդական տնտեսութեան վերականգնումը հնա-
րավոր չէր հանրապետութիւնների առանձին-ա-
ռանձին դոյութեան դեպքում:

«Մյուս կողմից միջադգային դրութեան անկա-
յունութիւնը և նոր հարձակումների վտանգն ան-
խուսափելի յեն դարձնում հանրապետութիւննե-
րի միասնական ճակատի ստեղծումը կապիտալիս-
տական շրջափակման հանդէպ: Վերջապէս հենց
Խորհրդային իշխանութեան կառուցվածքը, վորն
ինտերնացիոնալիստական է իր դասակարգային
բնույթով, Խորհրդային հանրապետութիւնների
աշխատավոր մասսաներին հրում է դեպի համա-
խմբում մեկ սոցիալիստական ընտանիքի մեջ»:

Հանրապետութիւնների Խորհրդային Միութիւն-
ը ստեղծված է նրա մեջ կամավոր մտնող ժողովուրդ-
ների լիակատար իրավադրութեան սկզբունքներով.
յուրաքանչյուր հանրապետութիւն իրավունք ունի
ազատորեն դուրս գալու Միութիւնից:

Մենք արդէն գիտենք, վոր Միութեան իշխանու-
թեան բարձրագոյն մարմինը ԽՍՀՄ Կենտրոնական է,
թիւրը կազմված է միութենական Խորհրդից և աղքու-
թիւնների Խորհրդից: Աղքութիւնների Խորհրդի խըն-
դերն է արտացոլել աղքային առանձնահատկութիւննե-

Զուլաչական հանրապետության բանվոր դասակարգը 1928 թվից հաղար հինգ հարյուր մարդուց աճել է մինչև տաս հարյուր մարդու :

Բաշկիրերան յեղեւ ե ցարական դադութ. նրա ժողովուրդը ցարելով՝ ուրոք մահանում եր, կապված եր վաճառականներ ճեա, վորոնք մի դույլ ողու համար ստանում եյին բաշկիր-աննանապահի կես տարվա յեկամուտը: Բաշկիրերան չունեի արդյունաբերական ձեռնարկություններ, վորոնք թալանված եյին դադութատեր-կուլակներ ձեռքով ցարելով՝ հովանավորությամբ, տղեա, խաւարամիտ, չունեի մի աղղալին դարոց:

Այժմ բաշկիրիայում հզոր արդյունաբերությունն է : Այնտեղ, վորտեղ առաջ անապատ էր, բարձրանում են հզոր գործարաններ և ֆաբրիկաներ : Միայն վերջին տարում գործարկվել են՝ Կրասնոսուլսկու ապակու գործարանը (600 հազար փութ ապակի մի տարում), լուցկու գործարան (660 հազար արկղ), Դուբիլ-եկստրակտի գործարան, փայտամշակման կոմբինատ :

1931 թ. բաշխելըյան արդյունաբերության մեջ և ներդրել է 55 միլիոն ռուբլի, 1932 թ. — 309 միլիոն ռուբլի: Կառուցվում են յերկու աշխարհում խոշոր զործարաններ — պղնձա-տուրքինային և մոտորական:

1932 թ. արժատական փոփոխութիւնն կատարվեց
 յերկրի ամբողջ տնտեսութեան մեջ. — զիտական հետա-
 զոտական պարտիաները զտել են տաք թերթաքարի
 հալալական հանքատեղեր, բացվել են Ստեղծիտամակի
 մոտ նալթի հանքատեղեր :

Բաշկիրիայի հետադա արագ ինդուստրացումը մոտիկ տարիների գործ է :

Հանրապետութիւնը ձեռք է բերել կուլտուրական չինարարութեան հսկայական հաջողութիւններ՝ առաջին աստիճանի դպրոցների մեջ են ընդգրկված դպրոցական հասակ ունեցող բոլոր յերեխաները, 30 հազար յերկտասարդներ սովորում են դյուզական յերկտասարդութեան դպրոցներում և զործաշարքներում (Փարբործում) : Աշխատում են 78 տեխնիկում : Վերջին տարում բացվել են կոմունիստական ինստիտուտ, դյուզատնտեսական բարձրագոյն հաստատութիւն և 4 դիտական ինստիտուտներ : Բաշկիրիան ունի և կունենա ե'լ ավելի դյուզատնտեսներ, ճարտարագետներ, դիտնականներ :

Միջին-ասիական հանրապետությունները, վորոնք անցյալում ամենից ավելի յեն թալանվել վորպես ցարական դադուէթ, դարավոր հետամնաց յերկրից մեր աչքի առաջ վեր են ածվում խոշորագույն կոնկրետ բամբակագործության և անասնապահության յերկրների՝ ժամանակակից մեքենական տեխնիկայի հիման վրա։ Մետաղագործության, տեքստիլ և մյուս գործարաններ են հիմնվում այնպիսի վայրերում, վորտեղ յերեք չի յեղել վոչ մի գործարան (որինակ՝ Տաշիկիստանում)։ Տաշիկիստանի հանրապետությունը 1930 թվին տվել 1931 թ.—32 միլիոն ռուբլու։ Կապիտալ ներդրումները նրա տնտեսության մեջ 1928 թվին մինչև 1000 թիվը ավելացել և 40 անգամ։

Ավազուտ անապատներով, վրտեղ գետ յերեկ զանգահներն եյին զընդում, շարժվում ելին ուղտերի քարավանները, — այսօր անցնում են Թուրքսիբիբի յերկաթուղային գնացքները, վրտոնք միջին-ասլական բամ-

բաղը կապում են Սիրիերի հացի հետ, բամբակադործական կոլտնտեսություններն ինդուստրիալ կենտրոնների հետ:

Ղրիմի մետաղադործական գործարանը, Կարելիայի թղթի գործարանները և Դաղստանի կոնսերվի ու ապակու գործարաններն անձանաչելի փոխում են աղբային հանրապետությունների գեմքը:

Այսպես և ամբողջ Միության պատկերը:

Դնեստրոստրոյը Ուկրաինայում, Չադեսը, Ռիոնդեսը, Գրեյլիդոնոստրոյը Կովկասում, Ոսինստրոյը Բելուռուսիայում, Կանտոպոլը Կարելիայում. ամեն տեղ բայլեիկները գետերին ելեկտրոկայանների յերկաթե խամութ են հագցնում, և հարյուր հազարավոր ելեկտրոնները դիպի մեխանիկական ուժեր են ի սպաս դնում աղբային ազատագրությանն ու սոցիալիզմի շինարարությանը:

Արագ տեմպերով առաջ է ընթանում դյուդատնտեսության աճումը, ցանրադաշտերի աճումը աղբային հանրապետություններում:

1932 թ. գարնանը ՈւՍՍՀ մեջ կոլեկտիվացված եր 67 տոկոսը բոլոր աշխատավոր դյուդացիական տնտեսությունների, ընդլորում կան արդեն համատարած կոլեկտիվացման 200 ուսյոն: ԲՍՍՀ մեջ կոլեկտիվացված և աշխատավոր դյուդացիական տնտեսությունների 50 տոկոսից ավելի. ԱՆՖՍՀ մեջ—40 տոկոս, ՈւզՍՍՀ մեջ 68,7 տոկոս, Թուրք. ՍՍՀ.—67 տոկոս:

Կովկասում, Թուրքեստանում ծավալվում են դեղանո հատիկային, բամբակադործական, անասնաբուծական խորհրտնտեսությունները, կաուչուկի բույսերի, ռաիման խորհրտնտեսությունները:

Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը համառորեն և հետեողականորեն դիժ են տանում բոմեն կերպ ողնելու ու զարդացնելու համար տնտեսապես հետամնաց աղբային հանրապետություններին:

Այդ բանին վորպես պարզ ապացույց կարելի յեցույց տալ միութենական (դաշնակից) հանրապետույթյունների բյուջեների աճման տեմպերը: 1931 թ. ամթյունների բյուջեների աճել է 45,8 տոկոսով աճման հետ բողջ ՍՍՀ-ի բյուջեյի 45,8 տոկոսով աճման հետ միասին, ՌՆՖՍՀ բյուջեն աճել է 31,2 տոկոսով. ՈւՍՍՀ—32,9 տոկոսով. ԲՍՍՀ—35,6 տոկոսով. ԱՆՖՍՀ—50,9 տոկոսով. Թուրք. ՍՍՀ—87,1 տոկոսով, Ուզբ. ՍՍՀ—61,8 տոկոսով. Տաջ. ՍՍՀ—108,5 տոկ.: 1932 թ. ինքնավար մարզերի բյուջեները (ՌՆՖՍՀ) կրկնապատկվում են առաջին հնդամյակի առաջին տարվա համեմատությամբ:

Մենք արդեն տեսանք, ընկեր, Չուվաշյան և Բաշկիրյան հանրապետությունների որինակով, թե ինչպիսի հսկայական կուլտուրական աճում ունեն հետապնաց աղբությունները, վորպիսի աճումն ապահովում է պրոլետարական դիկտատուրան: Նույն պատկերն է և պրոլետարական դիկտատուրան: Ամեն տեղ վեռան մյուս հանրապետություններ, մտցվում ընդհանուր րացվում է անդրադիտությունը, մտցվում ընդհանուր ուսուցում: Ամբողջ կուլտուրական աշխատանքը աղբային հանրապետություններում տարվում է մայրենի լեզվով:

Ուկրաինայում ուկրայինական լեզվով սովորողների տոկոսը կազմում է 94 տոկոս, Վրաստանում մայրենի լեզվով սովորում են սովորողների 98 տոկոսը, Ուզբեկստանում—97 տոկոսը, Թաթարստանում—96 տոկոս: Մինչև հեղափոխությունը մի շարք աղբություն-

ներ բոլորովին չունեյին իրենց դպրոցները, իսկ այն-
տեղ, վորտեղ դպրոցներ դոյություն ունեյին, նրանց
թիվը շատ քիչեր, և այդ դպրոցներում դասավանդու-
մը տարվում էր ուսուցիչ լեզվով: Ղաղախտանում մինչև
հեղափոխությունը յեղել են 13 հաղար սովորողներ:
Կիրգիզիայում 1914 թ. կար 4 հաղար սովորող. իսկ
1930 թվին արդեն մոտավորապես 52 հաղար սովորող:
Ներկայիս աղջային հանրապետությունների մեծամաս-
նության մեջ մինչև հեղափոխությունը բոլորովին չեն
յեղել բարձրագույն դպրոցական հաստատություններ:
Այժմ Ուկրաինայում—162 ԲՈՒՀ, Բելոռուսիայում—
26, Անդերկովկասում—32:

ԽՍՀՄ քիչ չեն այն ժողովուրդների թիվը, վորոնք
յերբեք չեն ունեցել իրենց գիրն ու գրականությունը,
այսինքն՝ նրանք ուղղակի չունեյին իրենց կուլտուրա-
կան կյանքը: ԽՍՀՄ այդպիսի ժողովուրդների թիվը
38 է, վորոնք ձեռք են բերել իրենց գիրն ու գրականու-
թյունը: Բացի դրանից, Խորհրդային իշխանությունը
կարևորագույն միջոցառումներ են անցկացրել փոխարի-
նելով՝ իր բարդությամբ լայն մասսաների համար
գեթվար մատչելի արարական այբուբենը լատինական
այբուբենով. այդ այբուբենով թարգմանված է 36 ժո-
ղովուրդների գրականությունը:

Ներկայումս ԽՍՀՄ-ում թերթեր և ժուրնալներ են
տպվում ավելի քան 60 լեզվով:

Այս են ԽՍՀՄ աղջային կուլտուրական շինարա-
րության տեմպերը:

Կարո՞ղ են արդյոք լուսավորության այս հոսանքի
առաջն առնել դարավոր տրագիդիաները և հետա-
մնացությունը, կրոնական հաշիւը: Մենք տեսնում ենք,
թե ինչպես մեկը մյուսի յետևից խորտակվում են ան-

հետ այդ տրագիդիաները, թե ինչպես Արևելքի կինը,
յերեկվա այդ ստրկուհին, այսոր դեն և չպրտում իր
չադրան, փարաջան և դառնում է կոլտնտեսուհի, աշ-
խատողուհի, խորհրդային հատարակական դորձուհի,
խատողուհի, խորհրդային հատարակական դորձուհի,
կոմունիստուհի, թե ինչպես փչում ու խորտակվում
կուլակի ճնշումը, բեգի, մանապի ճնշումը, թե
Վուլակի ճնշումը, բեգի, մանապի ճնշումը, թե
ինչպես յետ են չպրտվում կրոնական դուրմանն ու
ինչպես յետ են չպրտվում կրոնական դուրմանն ու
յեկեղեցին, մեջիդը, վանքերը, թե ինչպես խավարա-
մտության այդ կենտրոնները վերածվում են աղամբ-
ների ու դպրոցական հաստատությունների:

Հասկանալի չէ, վոր կուլտուրական շինարարու-
թյան նման թափ հնարավոր չէ կապիտալի իշխանու-
թյան ժամանակ:

Բերենք մի քանի համեմատություններ: Միայն
ուկրաինական թերթերի տիրաժը (յուրաքանչյուր հա-
մարի լույս տեսած որինակների թիվը) 1932 թվին
(7,2 միլիոն) 2,5 անգամ ավելի չէ ցարական Ռուսաս-
տանի բոլոր թերթերի տիրաժից (3 միլիոն):

Կապիտալիստների իշխանությանը յենթակա բոլոր
յերկրներում 1700 լեզվից մամուլ ունեն միայն 102-ը,
կամ 6 տոկոսը: ԽՍՀՄ-ում 140 լեզվից իրենց մամուլն
ունեն 61-ը կամ 43 տոկոսը: Ամերիկայում բնակչու-
թյան հաղար մարդուց սովորում են 250-ը. Ֆրանսիա-
յում—113. իսկ Կարեկիայում, վոր դեռ յերեկ ցարական
Ռուսաստանի ամենահետամնաց ծայրամասերից մեկն
էր, այսոր 1000 աշխատավորներից սովորում են—
338-ը: Կարեկիան անցել է Ֆրանսիայից և Ամերիկայից
կուլտուրական շինարարության տեսակետից: Ի՞նչ ար-
ժեք ունեն դրանից հետո բուրժուական բարբառանքները
«Խորհրդային Միության Քարբարոսության», «Վալբե-
նության» մասին:

6. Ձևով ազգային, բովանդակությամբ պրոլետարական

Ազգային կուլտուրաների զարգացումը ԽՍՀՄ-ում չի սպառնում արդյոք թուլացնելու բոլոր ազգերի աշխատավորների կապն ու միասնությունը, — կհարցնի մի ուրիշ ընկեր: Իհարկե վոչ:

Պատասխանենք հարցին. ի՞նչն է հանդիսանում ԽՍՀՄ ժողովուրդներից ամեն մեկի ազգային կուլտուրայի բովանդակությունը. ի՞նչ են սովորեցնում աշխատավորին խորհրդային ազգային դավրոցում, համարսարանում, ի՞նչ են նրան սովորեցնում թերթերը, զերբը, ինչի՞ մասին են խոսում ակումբում և այլն: Սովորեցնում են դասակարգային ատելություն դեպի բուրժուազիան ու կալվածատերերը, դեպի հարստահարողները, ճնշողները: Սովորեցնում են այն մասին, վոր բոլոր ազգերի աշխատավորների շահերը միասնական են խմբերակալի դեմ պայքարում: Դաստիարակում են հասկացնելու, վոր միայն պրոլետարական հեղափոխությունն ու դիկտատուրան են ազատագրում բոլոր ազգությունների աշխատավորներին: Սովորեցնում են սոցիալիստական շինարարության ուղիները պրոլետարիատի դեկավորությամբ և կրկին ցույց են տալիս բոլոր ազգերի աշխատավորների շահերի միասնությունը: Ցույց են տալիս դասակարգերի վռնչացման և անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու ուղիները: Ուրիշ խոսքով, ազգային կուլտուրայի բովանդակությունը սոցիալիստական է: Լինելով ձևով ազգային, այսինքն՝ զարգացնելով մայրենի լեզվի հիման վրա և հաշի առնելով տվյալ ազգի մի շարք կենցաղային առանձնահատկու-

թյունները, ազգային կուլտուրան ԽՍՀՄ-ում հանդիսանում է բովանդակությամբ սոցիալիստական: Կուլտուրայի ազգային ձևը — մոտիկ ու հասկանալի մասսաներին — հնարավորություն է տալիս արագ տեմպերով «դաստիարակել մասսաներին ինտերնացիոնալիզմի վրդով և ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան» (Ստալին):

7. Ազատագրման դրոշը

Հնդկաստանի հեռավոր աղքատիկ գյուղերում բեր-ներեքան պատմում են այն յերկրի մասին, վորտեղ չկա ճնշում ու թեղ ժողովուրդների կողմից թուլերի վրա. վորտեղ ուսանեն ու ուղղեկները, թաթարն ու տաջիկը, թուրքմենը, ամեն մեկն ու աշխատում է, հավասար իրավունք ունեն հացի, հողի, կյանքի ու յերգի:

Չինական խրճիթներում կուլինները գիշերները փռս-փռսում են այն մեծ յերկրի մասին, վորտեղ բոլոր աշխատողները հավասար են անկախ նրանից, թե ու կաշու ինչ գույն ունի, ու ինչ լեզու ու սովորություններ ունի: Այդ յերկրում վռնչացված են ջենտրիներն ու տուխանները, քված են սարդ-կապիտալիստները:

Աֆրիկայի նեգրական հյուղերում յերաղում են հեռավոր, ձյունասլառ Ռուսաստանի մասին, վորտեղ չկան սպիտակ տերեր և սև ստրուկներ, վորտեղ յուրաքանչյուր աշխատավոր իր յերկրի տերն է, վորտեղ բոլոր աշխատողները յեղբայրներ են:

Արևելքի ու Աֆրիկայի դավաթային ժողովուրդների վիթխարի, անծայրածիր աշխարհը, հարյուր միլիոնավոր խմբերակալի դեղին, սև և կարմիր ստրուկները, վորոնք տնքում են գաղութային լծի տակ, Հընդ-

լիստների կիսադադուլը, վորպես վարձատրություն իրենց ողնության համար:

1929 թվին Ուկրալինայում Միացյալ Պետքադվար-
չությունը հայտարարեց ընդհատակյա հակահեղափո-
խական մի կադմակերպություն «Սպիլկա Վիզլոյնիսիա
Ուկրալինի» անունով: Այդ կադմակերպությունը բաղ-
կացած էր ուկրալինական կալվածատերերից, բուրժու-
ադիլայից և բուրժուական ինտելիգենցիայից, տերտեր-
ներից: Տերտերների մեջ կային 46 նախկին ցարական
սպաներ, 22 դենիկինցիներ, 17 ժանդարմներ: Ինչի-
ն էր ձգտում ՍՎՈՒ: Անջատել Ուկրալինան ԽՍՀՄ-ից և
ստեղծել «անկախ» Ուկրալինա՝ դաշնակցած լեհական
ադմականության և բուրժուադիլայի հետ: Հակահեղա-
փոխականները խոստովանեցին, վոր հաջողության
դեպքում պետք է հողը վերադարձվեր կալվածատերե-
րին, իսկ դործարաններն ու Փարբիկները—բուրժուա-
ներին, հեղափոխական բանվորները պետք է դնային
դեպի կախաղան և բանտերը: Բանվորներին չի սիրում
ազգային հակահեղափոխությունը: Բանվորները չի-
նեյին, նրան կհաջողվեր խաբել ու իր հետևից տանել
գյուղացիությանը: Այդ պատճառով ՍՎՈՒ դեմ էր
Դինպրոպոլի շինարարությանը, Ուկրալինայի ին-
դուստրացմանը:

Միանգամայն նման կադմակերպություն—«Սոյուզ
Վիզլալենիա»—հայտարարվեց նաև Բելոռուսիայում:
Այստեղ նույնպես նախկին բելոռուսական կալվածա-
տերներն ու գյուղական կուլակները, բուրժուադիլան ու
բուրժուական ինտելիգենցիան յերազում էյին միանալ
լեհաստանի հետ միահամուռ ուժերով թալանելու հա-
մար բելոռուսական բանվորներին և գյուղացիներին:

Այդ յերկու կադմակերպությունն էլ ուղղակի կապ
էյին հաստատել լեհական գլխավոր շտաբի հետ, տա-
լիս էյին նրան լրտեսական տեղեկություններ մեր տըն-
տեսության մասին, ձգտում էյին (ճիշտ է, անհաջող
կերպով) սողոթիկել նաև Կարմիր բանակը:

Միանական մուսուլմանական բուրժուական պե-
տություն ստեղծել թյուրքական բոլոր ժողովուրդե-
րից, —այսպես էր մտածում Սուլթան Գալիյեվի հա-
կահեղափոխական ազգային կադմակերպությունն Ա-
րևելքում: Ողնելով թալանչի բամաճներին կուլակային
բանդաներին, Սուլթան-Գալիյեվցիներն ուղղակի
կապվել էյին անդլիական իմպերիալիզմի հետ, ճիշտ
կապվել էյին անդլիական իմպերիալիզմի հետ, ճիշտ
այնպես, ինչպես Ուկրալինայի և Բելոռուսիայի ազգա-
յանները (նացիոնալիստները), ամեն կերպ ձգտում
էյին սողոթիկել խորհրդային ապարատի մեջ, վորպեսզի
էյին սողոթիկել խորհրդային իշխանության ազգային քաղա-
ճախողեն Խորհրդային իշխանության ազգային քաղա-
քակությունը, նրա դեմ հանեն բանվորներին և
գյուղացիներին:

Բանվորներն ու գյուղացիները չգնացին ազգային
հակահեղափոխության յետևից: Նրանք էլ ավելի սերտ
համախառնվեցին Համ Կ(բ)Կ լենինյան ազգային քա-
ղաքականության շուրջը: Իսկ հակահեղափոխականներն
ստացան իրենց արժանի պատիժը պրոլետարական դիկ-
տատուրայի մարմիններից—Միացյալ Պետքադվարչու-
թյունից և դատարանից:

Շովինիզմի ամենալնասակար և ամենալտանդա-
վոր արտահայտություններից մեկը, այսինքն՝ թշնա-
մանքը դեպի մյուս ազգությունը, հանդիսանում հրե-
ատեցությունը, այսինքն՝ թշնամանքը դեպի հրեանե-

Հրեաները յեղել են ցարական Ռուսաստանում ամենից ավելի հետապնդվող ազգերից մեկը: Նրանց թույլ եյին տալիս բնակութիւն հաստատել միայն վորոշ, քիչ թվով նահանգներում (այսպէս կոչված մըշտական բնակութեան վայր ունենալ): Ընդվորում, իհարկե, կապիտալիստ հրեաների համար բացառութիւն եր լինում՝ վոստիկանութեանը կաշառելու միջոցով: Հրեաները չեյին կարող ծառայել պետական հիմնարկութիւններում, նրանց արգելվում եր հողագործութեամբ զբաղվել, դպրոցներն ու համալսարանները նրանց հատուկ նորմայով յին ընդունում, վոչ ավելի սովորողների 10 տոկոսից: Հրեաները յենթակա եյին չլիւթած ճնշման, հարստահարման ու ծաղրուծանակի: Յարական կառավարութիւնը հրեաների դեմ եր դրդում բանվորների ու գյուղացիների անգիտակից մասսաներին: Յարական կառավարութիւնն ատում եր աշխատավոր հրեաներին նրա համար, վոր, չնայած նրանք յենթարկվում եյին չլիւթած հետապնդման, իրենց միջից տալիս եյին մեծ քանակութեամբ հեղափոխականներ, վորոնք պայքարում եյին ինքնակալութեան դեմ:

Տերտերները, վոստիկանութիւնը, խանութպանները և չինովնիկները սխտեմատիկ կաղմակերպում եյին հրեական ջարդեր, դրդուելով հրեաների դեմ խաւարամիտ ու խաբված աշխատավորներին: Ամեն անգամ, յերբ կապիտալիստների և կալվածատերերի շահագործման պատճառով աշխատավորների անբավականութիւնն եր աճում, ցարական կառավարութիւնը հայտարարում եր հրեաներին վորպէս մեղավորներ ևս ժողովրդի բոլոր դժբաղտութիւնների համար և կաղմակերպում եր ջարդեր:

«Յերբ անիծյալ ցարական միապետութիւնն իր վերջին ժամանակն եր ապրում,—դրում եր ընկ. Լենինը,—նա աշխատում եր դրդուել հրեաների դեմ խաւարամիտ բանվորներին ու գյուղացիներին: Յարական վոստիկանութիւնը դաշնակցած կալվածատերերի ու կապիտալիստների հետ, կաղմակերպում եր հրեական ջարդեր: Կարիքից տանջված բանվորների ու գյուղացիների ատելութիւնը կալվածատեր-շահագործողներն աշխատում եյին ուղղել հրեաների վրա: Մյուս յերկրներում նույնպէս հաճախ ականատես ենք, վոր կապիտալիստները թշնամանք են հրահրում հրեաների դեմ, վորպէսզի բանվորների աչքերը կապեն, վորպէսզի նրա ուշադրութիւնը հեռացնեն աշխատավորների իսկական թշնամուց—կապիտալից»:

Պրոլետարական հեղափոխութիւնն ամեն տեղակաղբային ճնշման հետ վոչնչացրեց նաեւ հրեաների ճնշումը: Հարյուր հազարավոր աշխատավոր հրեաներ կովեցին և ընկան Կարմիր բանակի շարքերում՝ պրոլետարական դիկտատուրան հաստատելու համար: Ընդտարական դիկտատուրան հաստատելու համար: Ընդհակառակը, հրեական բուրժուազիան ակտիվորեն պաշտպանում եր սպիտակ-դիւարդիականութիւնը: Քաղաքական պայտերաղմից հետո հրեա աշխատավորներն ակտիվ մասնակցութիւն ունեն սոցիալիստական շինարարութեան մեջ: Հարյուր հազարավոր հրեաներ շինարարում եր մտնել: Տասնյակ հազարավոր հրեաներ հոգեւրած եր մտնել: Տասնյակ հազարավոր հրեաներ, դադործներ են դառնում: Ուկրայնայում, 'Լրիմում, զադործներ են դառնում: Ուկրայնայում, 'Լրիմում, Հեռավոր Արեւելքում աճում են հրեական կոլտնտեսու-

թյունները: Հրեաներն իրավահավասար ժողովուրդ են
գարձել ԽՍՀՄ ժողովուրդների ընտանիքում:

Դասակարգային թշնամին սակայն վուչ միայն չի
դադարեցնում, այլ տեղ-տեղ նույնիսկ ուժեղացնում է
հետամնաց բանվորներին ու գյուղացիներին հրեաների
դեմ գրգռելու աշխատանքը: Նախկին քաղաքապահ
վոստրիկանն աշխատավորների անվան տակ գործարան
սողոսկելով, հանդիպում է այնտեղ հաստոցի մոտ
հրեային և փսիսում, —ամեն տեղ մտնում են այս քրիս-
տոսովածառները:

Համատարած կոլեկտիվացման հարվածները տակ
կործանվող կուլակը ջանում է գրգռել գյուղացիներ-
ին հրեական կոլտնտեսությունների դեմ: Բազմա-
պիսի ձևերով հրեատեցության ազդեցության յե՛ն տանում
տերտերը, խորհրդային ապարատից վտարված ցարա-
կան կաշառակեր չինովնիկը, կոոպերացիայի ու
պետառևտրի կողմից վիզը կոտրած խանութպանը,
առանց յեկամուտի մնացած կարլածատերն ու գործա-
րանատերը: Հրեատեցությունը լայնորեն ոգտագոր-
ծում են կապիտալիստները նաև արտասահմանում: Նա
ծաղկյալ դերության մեջ է Փաշխտական Լեհաստանում
և Ռումինիայում: Հրեատյաց ազդեցության յե՛ն տանում
նույնպես գերմանական Փաշխտների կուսակցություն-
ը, Հիտլերի կուսակցությունը: Հին յերդ է, հին խըն-
դիր է կովեցնել տարբեր ազգություններին աշխատա-
վորներին, այդպիսով թուլացնել հեղափոխական ճա-
կատի ամրակուռությունը: ՄՊՔՎ և խորհրդային դա-
տարանը ԽՍՀՄ-ում վճռականորեն պայքար են մղում
չարամիտ հրեատեացիների դեմ: Սակայն այդ քեջ է:
Յուրաքանչյուր գիտակից աշխատավոր, Կարմիր բա-

նակի յուրաքանչյուր մարտիկ պետք է անխնա հակա-
հարված տա հրեատեցությանը:

Միշտ հիշելը, վոր հրեատեցությունը դա-
սակարգային թշնամու զենքն է: Շատ հաճախ հրեատե-
ցությունն ուղղակի դասակարգային թշնամի յե՛ն կամ
նրա գիտակից ազենտը: Թույլ մի տա դասակարգային
թշնամուն ազգային յերկպառակություն սերմանելու
աշխատավորների մեջ:

9. Լենինյան ազգային քաղաքականությունից թեփումների դեմ

Դասակարգային պայքարի սրումը յերկրում ուժե-
ղացնում է նաև դասակարգային թշնամու ակտիվու-
թյունն ազգային չինարարության ճակատում: Կոր-
ծանվող շահագործող դասակարգերը բանվորական դեկ-
տատուրայի դեմ գործ են դնում պայքարի բոլոր տե-
սակները, այդ թվում նաև ազգային հակահեղափոխու-
թյունը:

Կուսակցության ներսում լենինյան ազգային քաղա-
քանակությունից թեքումներն արդյունք են դասակար-
գային թշնամու ազդեցության կուսակցության առան-
ձին անկայուն խմբակներին:

Կուսակցությունը վճռականորեն և անխնա պայ-
քար է մղում լենինյան ազգային քաղաքականություն-
ից թեքումների դեմ և այդ թեքումների նկատմամբ
հաշտվողականության դեմ:

Վորպես գլխավոր վտանդ, ներկայումս հանդի-
սանում է կուսակցության գծից թեքումը դեպի մեծա-
պետական, վելիկոռուսական շովինիզմը:

«Դեպի վելիկոռուսական շովինիզմը թեքման
կյությունը, —ասում է ընկ. Ստալինը, — լեզվի,

կուլտուրայի, կենցաղի աղքատին տարբերություններն անտեսելու ձգտման մեջ է, աղքատին հանրապետություններին և մարդերի լիկվիդացիան պատրաստելու ձգտման մեջ է, ձգտում է խախտել աղքատին իրավահավասարության սկզբունքը, ձգտում է պսակագերծ անել ապարատի աղքատացման, մամուլի աղքատացման, դպրոցների և պետական ու հասարակական մյուս կադմակերպությունների աղքատացման վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը:

«Դժվար չէ հասկանալ, Վոր այդ թեքումը (դեպի մեծապետական շովինիզմը) արտացոլում է նախկին տիրող վելիկոուսական աղքի անհետացած դասակարգերի ձգտումը՝ վերադարձնել իր կորցրած առանձնաշնորհումները»:

Յվ հատկապես լիա համար աջ թեքումը դեպի մեծապետական շովինիզմը կուսակցությունը համարում է վորպես գլխավոր վտանգ:

Նախկին ճնշված աղքերի աշխատավորները դեռ չատ լավ են հիշում նախկին ճնշումը և մեծապետական շովինիզմի ամեն մի արտահայտությունը, Վորն ընդունակ է անվստահություն սերմանել նրանց մեջ, ընդունակ է թուլացնել ճնշված աղքերի աշխատավորներին մարտական դաշինքը ուս բանվոր դասակարգի հետ:

Մյուս թեքումը կուսակցության դժից աղքատին հարցում հանդիսանում է թեքումը դեպի տեղական նացիոնալիզմը:

«Դեպի տեղական նացիոնալիզմը թեքման ելույթյունն այն է, —ասում է ընկ. Ստալինը, —վոր նա ձգտում է առանձնանալ և պարփակվել իր աղքատին կեղևի շրջանակների մեջ, քուլարկել դա-

սակարգային ներհակություններն իր աղքի ներսում, պաշտպանվել վելիկոուսական շովինիզմից՝ սոցիալիստական շինարարության ընդհանուր հոսանքից հեռանալու միջոցով, չտեսնել այն, ինչը մերձեցնում, միավորում է ԽՍՀՄ աշխատավորական մասսաներին ու ժողովուրդներին, և տեսնել միմիայն այն, ինչը կարող է հեռացնել նրանց միմյանցից»:

«Տեղական նացիոնալիզմի թեքումն արտացոլում է առաջներում հարստահարված աղքությունների մահացող դասակարգերի դժգոհությունը պրոլետարիատի դիկտատուրայի ուժից, նրանց ձգտումն առանձնանալու իրենց աղքատին պետության մեջ, հաստատելու այնտեղ իրենց դասակարգային տիրապետությունը»:

Կուսակցությունը վճռականորեն պայքարում է յերկու թեքումների դեմ, միաժամանակ ձեռք առնելով բոլոր միջոցները հետագայում դորձնականորեն սնցկացնելու լենինյան աղքատին քաղաքականությունը, վերացնելու աղքատին անհավասարության տարրերը և լայնորեն զարգացնելու ԽՍՀՄ ժողովուրդների աղքատին կուլտուրաները:

Պետհրատի տպարան

Սերգեյեց Զ. Սաուկյան

Պատվեր 4039, գլավլիտ 8037 (բ) Հրատ 2467 տիրած 2500

Հանձնված է արտադրություն 27 դեկտեմբերի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 8 հունվարի 1933 թ.

Յ Ա Ն Կ

Ե Զ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԽՈՐՀԸՐ-
ԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական պետություն և բուրժուական դեմո- կրատիա	3
Պրոլետարական դիկտատուրան և նրա խնդիրները .	19
Դասակարգային պայքարը պրոլետարիատի դիկ- տատուրայի ժամանակ	46
Կուտակիչության և խորհրդային իշխանության ազ- գային փառափառությունը	68



ՀՀ Ազգային գրադարան



NL0201144

604
I

3 1/2